

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական

52^{րդ} ՏԱՌԻ, Դ. ՇՐՋԱՆ

թիի 27

5 ՅՈՒՆԻՍ 1903

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթաբերքի տարեկան բաժանորդագրիցն է Կ. Պոլսոյ համար քառսուն դրո. եւ գաւառներուն համար յիսուն դրո., կանխիկ վճարելի: Արտասահման 12 Ֆրանք կամ 5 ռուպլի: Թղթաստանի ծախքը եւ վճարումներն վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուի: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ հրապարակ կ'ելլէ ամէն շաբաթ առտու: Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած են, պէտք է իսկոյն իմացնեն եւ վճարեն: Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առարկութիւնները նկատուողներն չեն առնուի:

2^{րդ} հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուի:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշէլի պայմաններով:

Ձեռն-ԲԵ՛ ԵՒ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ԲԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հարցէ

در علیہ غلطہ (ماسیس) غرضی اداره سی

ԽՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍ

Կ. Պոլիս, Ղալաթիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

ԺԻՒՐԱԿԱՆ ԱՆՏԻ ԳԵՄ՝ ՆԱՍԱԶԳՈՒՂՈՒԹԻՈՒՆ

Ծիրական ախտի դէմ նախազգուշութեան միայն ճամբայ մը կայ. այն է մարմինը միշտ կենսական զօրութեամբ պահել որնոր դուրսութեան կենսական զօրութիւնը, առողջութիւնը և դիմացողան դժ տալով կրնայ ըլլալ:



SCOTT'S EMULSION

աշխարհիս մէջ ամենալաւ “ուտելիք-դեղ” է. որ շուտմբ առողջութիւնը կը վերականգնէ և երակներու մէջ նոր հարուստ արիւն կը տարածէ:

Եթէ կազմութիւնը կատարեալ առողջութեան մէջ չէ և բարակցաւ առաջին նշանները երեան կ'ելլեն. ինչպէս տեղական դուրսութիւնը, թէթե սակայն թելածար հազ, գիշերները սաստկացող բարեխառնութիւն և ախորժակի կորուստ են. ժամանակ վատնելու չէ, մէկէն Ըսգոթի Բաղադրութիւնը առնելու է. միակ դեղն է որ կրնայ մարդս առողջութեան և զօրութեան վերականգնել և այս եղելութիւնը գործնականապէս կը տեսնուի վասնզի հազաբաւորներ տեսած են և կը տեսնեն:

ԸՍԳՕԹԻ ԲԱԳԴՐՈՒԹԻՈՒՆ

կատարելապէս անուշահամ է, ախորժակը կենդանացունէ, և մարսողութիւնը կ'աճապարէ. Հիւանդութեան սերմը կը մեղցրնէ և շուտմբ մարմինը կը զաւալէ: Ըսգոթի Բաղադրութիւնը բնդմիշտ այս տեսնուած նշանով վարդապոյն փաթեթի մը մէջ կը գտնուի:

Հիշե՛րու վրայ ասոր ուշադրութիւնը ընել պէտք է:

Բոլոր դեղատոմսերը և դեղաձառանքները ինչ-ի՛նչ:

21

ԱՊԱՌԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՎԵՐՁԻՆ ԳԻՆ



Եթէ կ'ուզէք ամէն տեսակ գոհարեղէններ ունենալ, աժան ու ճաշակաւոր, թէ՛ արեւելեան եւ թէ՛ եւրոպական ճաշակով պատրաստուած, ժամացոյցներ, արծաթեայ զաւաղաններ եւայլն, դիմեցէ՛ք Պոլիս, Ոսկերչաց Շուկան, Մեծ-փողոց, թիւ 13:

Հարիւրին 20 կանխիկ, մնացեալին համար 100ին 5 շաբաթական վճարում. կանխիկ գ'ն. զին համար հարիւրին 5 զեղչ: Գործածուած գոհարեղէնները եթէ վնասուած չեն՝ 100ին 10 զեղչով ետ կ'առնուին. իսկ ապառիկ գրնողներէն՝ 100ին 15 զեղչով:

ԱՄՐԱՆ ԱՌԹԻԻ

Կրսեն թէ ամառը որ եւ է սառուցեալ ըմպելի կը զովացնէ, իսկ քիչը կը քրտնցնէ մարդը:

Փորձեցէ՛ք եւ պիտի տեսնէք թէ այդպէս ըսողները կը սխալին:

Գնեցէ՛ք Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱ. ԳՈՒԼԵԱՆԻ՝ Զինաստանէն, Հնդկաստանէն, Ճափայէն եւ Սէլանէն ուղղակի բերել տուած քաւմ, հոսաւեհ եւ առողջարար թէյերէն, համոզուեցէ՛ք մեր ըսածին եւ զովացէ՛ք ամառուան տաք օրերուն:

Միշտ ուշադրութիւն մեր վաճառանիչին:

Կ. Պոլիս, Պահճէ Գալու, ճէլալ պէյ Խան, թիւ 10:

Մասնաճիւղեր Թուրքիոյ գլխաւոր քաղաքներուն մէջ, նոյնպէս Եգիպտոս:



Կ. Պոլսոյ մէջ՝ Մալիսի հին թիւերէն գնելու պէտք ունեցողները կրնան դիմել Կամուրջին գլուխը լրագրավաճառ Միսաք աղային:

LA CONFIANCE



ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵԱՆՔԻ ԴԷՄ

Ապահովագրական այս ընկերութիւնը, որ հաստատուած է ու կը գործէ Ֆրանս. Կառավարութեան ֆոնդայիզին ներքեւ, երաշխաւորեալ դրամագլուխ ունի՝ հրդեհի ճիւղին համար 56,000,000 ֆր. եւ կեանքի ճիւղին համար 36,000,000 ֆր.:

ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ մէկն է Եւրոպայի ամէնէն պատուաւոր եւ ամէնէն վստահելի ապահովագրական մեծ ընկերութիւններէն, եւ ուր որ մասնաճիւղ հաստատուած է՝ միշտ գոհ ձգած է իր բոլոր յաճախորդները, իր կատարեալ ուղղամտութեամբը եւ կանոնաւոր գործառնութիւններով:

Այս վաղեմի ընկերութիւնը մեծ վարկ կը վայելէ ամէն կողմ. եւ իր գործառնութեանց ու վստահելիութեան վրայ գաղափար մը տալու համար թուենք մէկ քանին այն հանրածանօթ հաստատութիւններէն, որոնք ապահովագրուած են ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍի:

Ֆրանսայի նահանգներու եւ գաւառներու կարգ մը պաշտօնատուներէն զատ, Բարիզի՝ Օբէրա, Վոսվիլ, Նուվօթէ, Ամպիկիւ, Ֆօլի-Տրամաթիք եւ այլն թատրոնները, նաեւ Պօլտոյի, Թուլուզի, Լիոնի, Մարսիլիայի, Նանդի, Նիսի, Ալճէրիոյ, Բուէնի, եւ ուրիշ տեղերու մեծ թատրոնները:

Պոն Մարչէն, Լուվրի վաճառատուները, Բիկմալիոնը, Բրէնթանի, Պէլ-Ժառտինիէռի, Օթէլ տը Վիլի եւ Սամարիթէնի մեծ վաճառանոցները:

Թրանսաթլանթիք, Հալը-Մարսիլիա նաւարկութեան, Մովային Փոխադրութեանց, Ֆրանսական Թրամուէյներու, խնայողական երկաթուղիի ընկերութիւններ:

Մասնաւորապէս ուշադրութեան առնուելիք պարագայ մըն է որ ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ ընկերութիւնը, իր Կազմական Կանոնագրին համաձայն, պարտաւոր է ամէն վեց ամիսը անգամ մը իր ելմտական կացութիւնը ենթարկել Ֆրանսայի Առեւտրական Նախարարութեան քննութեանը: Նոյնպէս Սէնի քաղաքապետութեան, Բարիզի Առեւտրական Սենեակին եւ այլն:

Ընկերութեան դրամատունն է Բրէտի Լիօնէն:

Սոյն ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը ստանձնած է՝ մեր հրապարակին վրայ իր պատուաւորութեամբը ծանօթ

ԳԱՌՆԻԿ ԱՃԱՌԵԱՆ

Որուն պէտք է զիե՛ն թէ՛ հրդեհի եւ թէ՛ կեանքի ճիւղին վերաբերեալ ապահովագրութեանց կամ տեղեկութեանց համար: Գ. Աճառեան կը վարէ նոյնպէս Compagnie générale d'Assurances Maritimes ծովային ապահովագր. ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը:

Հասցէ. — Պօլիս, Մահմուտ իաչա, Պէոյիւք Երլաըզ խաչ, թիւ 14, Լա Գօնֆիանս ապահովագր. ընկ. Գրասենեակը:

Դառնիկ Աճառեան կը վարէ նաեւ, իր անձնական սեփականութիւնը եղող անբիւր վաճառատուն մը, Պօլիս, Շուկայ, Մուհաֆազաճըլար, թիւ 46, ուր գաւառներէն առած խաբի յանձնարարութիւններ կ'ընդունուին:



ՌՕՍԻԱ - ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1881 մարտ 20ի Կայս. Ուքազով արտօնուած

Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ չէնքը:

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի ԿԵԱՆՔԻ վրայ, եւ ՀՐԴԵՀԻ, ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱԾ. ՆԵՐՈՒ ԴԷՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈԳԵԿԱՌՔՈՎ ԵՒ ՇՈԳԵՆԱՒՈՎ ՈՒՂԵՒՈ. ԲՈՒԹԵԱՆ ԱՐԿԱԾՆԵՐՈՒՆ ԴԷՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ Կոտ. րուելուն դէմ:

Ընկերութեան դրամագումարը, ամբողջապէս վճարուած 10,666,667 Ֆրանք

Երաշխաւորութեան գումար աւելի քան 137,300,000 »

Ընկերութեան ապահովագրողներուն վճարուած դրամա- 282,000,000 »
գլուխ եւ վիսաց հատուցում

1902 տարւոյ մէջ գանձուած ապահովագին եւ տուկոս 54,000,000 »

Ամէն տեսակ տեղեկութեանց ամար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Աղարեան խան, Վոյվոտա, Դալաթիա, — եւ Դալաթիոյ Գործակալութեան, Էսկի Կէօրիւք խան, Բարափին վրայ:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՊԱՐՏԻՉԱԿ

Վարժարանիս նպատակն է տալ միջնա- կարգ, հիմնական կրթութիւն մը, հետեւե- լով Անգլիական ու Ամերիկեան նոյնօրինակ Հաստատութիւններու (High School) ծրագ- րին: Նոյն ատեն ալ, սակայն, նկատի առնե- լով երկրին պահանջները՝ մասնաւոր խնամք կը տարուի տոհմային ու Պետական լեզու- ներու եւ գրականութեան, ինչպէս նաեւ ֆրանսերէնի: Ամենէն պզտիկ կարգերէն սկսելով՝ կարգ մը դասեր կ'աւանդուին անգլիերէն լեզուով, որպէս զի բոլոր աշա- կերտները կանոնաւ ընտելանան Անգլիերէ- նի: Տօրէնը Տօքթ. Չէյմպըրս կ'աւանդէ տոմարակալութեան դասը, որ մասնաւորա- պէս կը յարմարցնէ ընթացաւարտները գործ- նակութի կեանքի: Առողջապահութեան դասը կ'աւանդէ վարժարանին բժիշկը որ միանգա- մայն մօտէն կը հսկէ բոլոր աշակերտներուն առողջութեանը վրայ: Գիտական ճիւղերու դասախօսութիւններն արդիւնաւորելու հա- մար՝ վարժարանը ունի պիտանի ու անհրա- մեշա դործիքներու ընտիր հաւաքածոյ մը:

Նորակառոյց նպատակաւոր մար չէնքը եւ նորատաղ ընդարձակ հողերը՝ ամէն ժամանակէ աւելի նպաստաւոր են աշակերտներու հան- զրատութեան եւ առողջութեան, գեղը ըլ- լալով արդէն հանրածանօթ՝ իր մաքուր օ- դօմն ու գեղեցիկ տեսարաններով:

Վարժարանիս վերաբացումը (24րդ տա- րեւրջան) տեղի պիտի ունենայ Սեպտեմբեր երեքին (Ն. Տ.): Տարեթոյական է 16 օսմ. ոսկի: Աւելի մանրամասն տեղեկութիւններու համար դիմել անձամբ Պայպրլ-Հասուգ, Կ. Պոլիս, կամ նամակով Տնօրէնութեան, Պար- տիզակ:

ՀԱՅՈՒՂԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

ԱՏԱՐԱԶԱՐ

Վարժարանիս նոր տարեւրջանը պիտի սկսի Սեպտ. 9ին. (Ն. Տ.), Չորեքշաբթի: Գիշերօթիկներու տարեթոյական է 12 օսմ. ոսկի, որուն կէսը պէտք է վճարել Սեպտ. սկիզբը. միւս կէսը Յունուարի մէջ, Դա- նակի դաս առնողները 3 իսկ երգեհօնի դաս առնողները 1½ ոսկի աւելի կը վճարեն:

Կէս տոմսակով: Ատարազար ուղեւորելու եւ ուրիշ զիւրուքեանց համար՝ կարելոր է որ վարժարանին գիշերօթիկ աշակերտուհի- ները ինչպէս նաեւ յառաջիկայ տարեւրջանին նոյն վարժարանին աշակերտիլ լիափաքող օրիորդները, իրենց անունները ղրկեն՝ եւ կամ անձամբ կամ իրենց պալտպանին միջո- գաւ ներկայանան՝ Մր. Ու. Ու. Փիթի. թիւ 5, Ամերիկեան Խան Կ. Պոլիս մինչեւ Սեպտ. 4, (Ն. Տ.):

Վարժարանին յայտադիրը ուղողներուն ճրիկը ղրկուի Ուրիշ տեղեկութեանց հա- մար գրել Տօքթ. Ս. Էֆ. Գալալճեանի, Ատենապետ Խնամակալութեան, Ատարազար:

ՄԱՍԻՍ

52^{րդ} ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 27

5 ՅՈՒՆԻՍ 1903

ՎԱՏԻԿԱՆԻ ԾՈՒՐՋԸ

ԻՆՉՊԵՏ Կ'ԸՆՏՐՈՒԻ ՀՈՌՄԱՅ ՊԱՊԸ

Լեոն ԺԳ.ի ընտրութիւնը. — Յաջորդական փոփոխութիւններ. — Վառաւանքին ծովը. — Ի՞նչ կ'ըլլայ Պապին մեռնելէն վերջ. — Արժաքեայ մուրճը. — Լեոն ԺԳ.ի գրական արժաւորութիւնները. — Վերջին բանաստեղծութիւնը. — Քաղաքացիներ Պապերու պատմութեան:

Օրուան ամէնէն շահեկան հարցերէն մէկն է Լէօն ԺԳ. Պապին հիւանդութիւնը որուն ալ եւ ալ պարագաները այնչափ մանրամասնօրէն կը ներկայացուին արդէն թերթերու մէջ: Ինչպէս կը յիշուի, հեռագրական գործակալութիւն մը նախ ծանոյց թէ Պապը մեռած է. յետոյ ուրիշ հեռագիրներ հերքեցին այդ կանխահաս լուրը, հաղորդելով թէ Պապին վիճակը ծանրացած է ցրտաւռութեան մը պատճառաւ, և այսպէս, հետզհետէ հասած տեղեկութիւններ յաջորդաբար ծանուցին Լէօն ԺԳ. Պապին հիւանդութեան հանգամանքը, վախճանին հաւանականութիւնը և հոգեվարքը:

Այդ հաւանական վախճանին առթիւ մասնաւոր այժմէութիւն մը կը ստանայ այն եղանակը՝ որով կ'ընտրուին Հռոմայ Պապերը: Եւ իրապէս ալ շատ հետաքրքրական է այդ ընտրութիւնը, որուն վրայ լիակատար դադար մը տալու համար ստորեւ կը ներկայացնենք նոյն ինքն Լէօն ԺԳ. Պապին ընտ-

րութեան պարագաները, քաղելով ստուար ու կարեւոր հատորէ մը(*) որ Պապին վրայ գրուած լաւագոյն գործերէն մէկը կրնայ նշկատուիլ:

* * *

Մատուռը՝ որուն մէջ պիտի կատարուէր ընտրութիւնը, յատկապէս յարգարուած է: Երկու կողմը՝ 64 դահլիճ (բարձր աթոռներ) զետեղուած են, կէսը մէկ կողմ, կէսն ալ միւս կողմը, և ամէնքն ալ շատ տեսանելի կերպով թուադրուած. իւրաքանչիւր դահլիճ առջեւ դրուած է սղօսիկ սեղան մը՝ որուն վրայ կը դնուին թուղթ, մեղան և գրիչ: Այդ աթոռներէն չորսը կանանչ կերպասով ծածկուած են, որովհետեւ կը պատկանին նախորդ պապական ընտրութեան մասնակցած կարտինալներու:

1878 թիւորուար 19ին, առտու կանուխ՝ 64 կարտինալները՝ որոնց մէջ նաեւ կարտինալ Բէչչի (վերջէն Լէօն ԺԳ.) մատուռ կը մտնեն և կը բազմին իրենց աթոռներուն վրայ: Կարտինալ Բէչչիի աթոռը 9 թիւը կը կրէ: Կարտինալներու երիցագոյնը տկար է. իրմէ անմիջապէս կրտսերը թիւ պատարագ մը կ'ընէ, ուրկէ վերջ կը սկսին ընտրական ձեւակերպութիւններն ու նախապատրաստութիւնները: Երեք կարտինալներ կը նշանակ-

(*) Vie de Léon XIII.—Son siècle, son pontificat, son influence; composée d'après des documents authentiques.—Edition française annotée avec soin par P. M. Brin.—Paris, Firmin Didot & Cie. Date(?).

ուին՝ քուէարկութեան հսկելու և քուէները համընդուն համար. երեքն ալ պէտք է ուշադրութեամբ քննեն քուէթուղթերը՝ որոնք ընթերցելու կ'անուանուին: Այդ ընթերցելու երկար թուղթ մըն է, և բաժնուած է երեք առանձին մասերու: Վերի մասին վրայ, իւրաքանչիւր կարտինալ պարտաւոր է լատիններէնով նշանակելու իր անունը ու քուէն՝ հետեւեալ կերպով. — «Ես, կարտինալ... գերագոյն հովուապետ կ'ընտրեմ իմ գերագաւառ տէրս՝ կարտինալ...»: Այս վերջնոյն անունը պէտք է տեղ բռնէ թուղթին ճիշդ կեղորոնը: Իսկ վարի մասին վրայ, քուէարկող իւրաքանչիւր կարտինալ պէտք է Ս. Գրքի ո՛ր և է մէկ հատուածը զրէ, միշտ լատիններէն, որպէս զի ո՛ր և է կասկածի մը ծագման առթիւ կարենան դիւրաւ հասկնալ թէ ո՛ր կարտինալը տուած է սա կամ նա քուէն: Այս ամէնը դրուելէն վերջ, իւրաքանչիւր կարտինալ պէտք է պլորէ իր քուէթուղթին վերի և վարի մասերը ու կնքէ, մի՛ միայն ընտրելիին անունը բաց թողլով: Քուէթուղթերը այդպէս պատրաստելէ ետքը, կարտինալները կ'սկսեն իրենց աթոռէն և իրարու կտուրէ խորանին առջեւ կ'երթան: Հոն իւրաքանչիւր ընտրող ծունկի կու գայ, և բարձր ու յստակ ձայնով մը Յիսուս Գրիստոսը վկայ կոչելով կը յայտարարէ թէ իրեն արժանաւորագոյն երեւցած կարտինալին տուած է քուէն: Յետոյ խորանին սանդուխներէն բարձրանալով, քուէթուղթը կը ձգէ մեծ սկիհի մը մէջ:

Կարտինալ Բէչչիի ընտրութեան միջոցին քուէթուղթերը ճիշտ այդ կերպով կը նետուին սկիհին մէջ՝ որ իրր քուէտուփ կը ծառայէ: Բոլոր քուէները դրուելէ վերջ, քուէարկութեան հսկելու համար նշանակուած երեք կարտինալները իրենց կարգին խորանին առջեւ կ'երթան: Մէկը կ'առնէ սկիհը և աղէկ մը կ'երեցնէ՝ որպէս զի քուէթուղթերը իրարու խառնուին: Երկրորդը կը համրէ քուէթուղթերը և կը դնէ ուրիշ սկիհի մը մէջ: Եթէ քուէթուղթերը պակաս կամ աւելի ըլլան, ամէնքը մէկանց կ'այցուին և նորէն քուէարկութեան կը սխուր: Այդ դործողութիւնն ալ կատարելէ վերջ, երեք կարտինալները քուէթուղթերը պարունակող սկիհը կը փոխադրեն քառակուսի սեղանի մը վրայ, որ մատուռին ճիշդ մէջտեղը դրուած ըլլալով, բոլոր կարտինալներուն ալ տեսանելի է: Երեք կարտինալներէն ամէնէն տարիքոտր սկիհին մէջէն քուէթուղթ մը կ'առնէ և բարձր ձայնով կը կարդայ անոր մէջտեղը նշանակուած անունը: Յետոյ միեւնոյն քուէթուղթը կը յանձնէ տարիքով իրմէ կրտսերին՝ որ իր կարգին նշանակուած անունը բարձր ձայն կարդալէ վերջ կը յանձնէ երրորդին: Ան ալ քուէթուղթին վրայ նշանակուած անունը կը կարդայ բարձր ձայն: Այսպէսով, իւրաքանչիւր անուն երեք անգամ ամէնէն լսելի կերպով մը կ'արտասանուի, որով սոսիալանքի տեղի չի մնար բնաւ: Այդ միջոցին, իւրաքանչիւր կարտինալ իր առջեւ թուղթ մը ունի՝ որուն վրայ տպագրուած է ընտրելի ճէ կարտինալներուն անունը: Ամէն անգամ, որ երեք կարտինալները անուն մը արտասանեն, ամէն մէկը իր թուղթին վրայ կը փնտռէ այդ անունը և առաջին նշան մը կը դնէ: 1877 փետրուար 19ին, կարտինալ Բէչչի 23 քուէ կը չահի՝ թիւ մը՝ որուն չափ ոչ մէկ կարտինալ կ'ընդունի: Եւ սակայն, որպէս զի ընտրութիւնը ընդունելի ըլլայ, պէտք է որ ընտրելին քուէարկողներու երկու երրորդին քուէն չահած ըլլայ: Կարտինալ Բէչչի, որ չափ ալ մեծագոյն թուով քուէ ստացած է, չի կրնար մեծամասնութիւն չահած նկատուիլ: Քուէարկութիւնը արդիւնք չէ տուած ուրեմն: Բոլոր քուէթուղթերն ալ հաւաքուելով կը նետուին վաւարանի մը մէջ՝ որուն խողովակը պատուհաններէն մէկէն դուրս կ'ելլէ: Մատուռին շուրջը խռնուած անհամար բաղձութիւնը, այդ խողովակէն ելլող ծախք տեսնելով կը հասկնայ թէ ընտրութիւնը ապարդիւն անցած է:

Նոյն օրը, իրիկունը, երկրորդ քուէարկութիւնը կը կատարուի: Կարտինալները միեւնոյն հանդիսաւորութեամբ մատուռ մըն նշելով, սովորական աղօթքներէն վերջ կը պատրաստեն իրենց քուէները: Քուէարկութեան գործողութիւնները նոյնն են, բայց աւելի ծանրակշիւ հանգամանք մը ստացած:

Նոյն օրը, իրիկունը, երկրորդ քուէարկութիւնը կը կատարուի: Կարտինալները միեւնոյն հանդիսաւորութեամբ մատուռ մըն նշելով, սովորական աղօթքներէն վերջ կը պատրաստեն իրենց քուէները: Քուէարկութեան գործողութիւնները նոյնն են, բայց աւելի ծանրակշիւ հանգամանք մը ստացած:

կարտինալներուն աչքը Բէչչիի վրայ է. հաւանական ընտրելին կը նկատուի որովհետեւ օտար կարտինալները՝ որոնք մինչեւ այն ատեն զայն իր գրասենեակէ միայն կը ծանոնային, աւելի լաւ տեղեկացած են անոր անցեալին և իրենց քուէթուղթերուն վրայ անոր անունը նշանակած : Վերջապէս բոլոր քուէթուղթերը կը ձգուին սկիշին մէջ, և սեղանին վրայ փոխադրուելով կը կարդացուին : Այս անգամ ալ կարտինալ Բէչչի ամէնէն շատ քուէ կը շահի : Պօրտոյի արքեպիսկոպոսը՝ կարտինալ Տօննէ՝ որ այդ միջոցին Բէչչիի քով կը գտնուէր, հետեւեալ կերպով կը նշեմ կարագրէ անոր վիճակը. — «Տեսնեալով որ ամէնէն շատ իր անունը կ'արտասանուի, և իր ընտրութեան հաւանականութիւնը կ'աւելնայ, կարտինալ Բէչչի սկսաւ լալ : Տեսայ որ ձեռքերը կը դողային : Պահ մը գրիչը իսկաւ ձեռքէն, առի և իրեն տուի, քաջութիւն ըսելով : » Բէչչի սակայն 30 քուէ կը ստանայ ու կրկին մեծամասնութիւն չի գոյանար : Քուէթուղթերը նորէն կ'այրուին և դուրսը խռնուած ժողովուրդը՝ վառարանին խողովակէն ելլող ծուխը տեսնելով կը հասկնայ թէ նորէն քուէարկութիւնը արդիւնք մը չէ տուած, և յուսախաբ տուն կը վերադառնայ : Նոյն գիշերը, կարտինալ Բէչչի Վատիկանի գերագոյն ժողովին ներկայանալով, լալով կը յայտարարէ թէ ինք անարժան է այդ պաշտօնին, և կը խնդրէ որ յարմարագոյն կարտինալի մը տրուին քուէները : Կը յանձնարարեն իրեն որ Աստուծոյ աստիճանի, և երբեք չփորձէ ուրանալ իր կարողութիւնն ու յատկութիւնները՝ որոնք արդէն իսկ դնահատուած են միւս կարտինալներուն կողմէ : Բէչչի կը ստիպուի հնազանդիլ :

Յաջորդ օրը, փետրուար 20, կը կատարուի երրորդ քուէարկութիւնը : Այս անգամ Բէչչի կը ստանայ 44 քուէ, քուէներու թիւին երկու երրորդէն շատ աւելի : Քուէարկութեան արդիւնքը յայտնի ըլլալուն պէս, արարողագրեալ Վատիկանի ժողովին, կարտինալ-քահանաներու և կարտինալ-սարկաւազներու երիցագոյն անդամներուն հետ կը յառաջանայ դէպի Թ թիւը կրող աթոռը, որ Բէչչիին է և կը հարցնէ հանդիսաւոր կերպով

մը. «Կ'ընդունի՞ք ընտրութեան արդիւնքը և կաթողիկէ եկեղեցւոյ գերագոյն պետի պաշտօնը» : Կարտինալ Բէչչի ոտքի կ'ելլէ դողդոջելով ու գրեթէ կակաղելով նախ իր անարժանութիւնը յայտնելէ վերջ, կը յայտարարէ թէ կ'ընդունի ընտրութեան արդիւնքը :

Ան ատեն կարտինալներու երիցագոյնը ծունգի կու գայ իր առջև : Առաջին մեծաբանքն է ատիկա : Արարողագրեալ ձեռքերը իրարու զարնելով նշան կու տայ կարտինալներուն որոնք իսկոյն ոտքի կ'ելլին : Այդ միջոցին, կարտինալներու աթոռներուն վրայ գտնուած ամսօրվանիները վար կ'առնեն և միայն նորընտիր Պապին ամսօրվանին բաց կը թողուն : Երբ այդ գործողութիւնը կ'աւարտի, կարտինալներու երիցագոյնը կը հարցընէ. — «Ի՞նչ անուն կ'ուզէք առնել» : — «Լէոն Ժ. Գ. անունը» — կը պատասխանէ կարտինալ Բէչչի :

Անմիջապէս կը ծանուցուի ընտրութեան վերջացած ըլլալը : Մասնաւոր պաշտօնեաներ կը հանեն Բէչչիի կարտինալի զգեստները և կը հաղցեն Պապական զգեստները, ուրկէ վերջ, խորանին առջև կը պատրաստուի Սեփա Ժեսքաթօրիան, շարժուն գահաւորակը, որուն վրայէն նորընտիր Պապը պիտի ընդունի իրեն համար ըլլալիք մեծաբանքները : Ամէնէն առաջ երիցագոյն կարտինալը կը մօտենայ նորընտիր Պապին, կը հանէ անոր մատէն կարտինալի մատնին, և անոր տեղ կ'անցընէ Պապական մատնին : Յետոյ խոնարհելով կը համբուրէ Պապին ոտքը, և անկէ ետքն ալ աջ ձեռքը : Պապն ալ անոր երկու երեսները կը համբուրէ : Բոլոր կարտինալներն ալ, ինչպէս նաեւ պաշտօնեաները, միեւնոյնը կ'ընեն :

Այդ առաջին մեծաբանքին աւարտելէն վերջ, կարտինալ-սարկաւազներու երիցագոյնը Պապէն հրաման կը խնդրէ ընտրութեան արդիւնքը ծանուցանելու : Հրամանը կը տրուի, և կարտինալը իր հետեւորդներով կ'ելլէ դուրս ուր անհամար ժողովուրդ կը սպասէ՝ ընտրութեան արդիւնքին տեղեկանալու համար : Ոչ ոք գիտէ տակաւին թէ ո՞վ ընտրուած է, բայց վառարանին ծխնելոյզէն ծուխ ելած չըլլալով, ամէն մարդ

հասկցած է թէ այդ երրորդ քուէարկութիւնն ալ ապարդիւն չէ անցած: Պապին ընտրութիւնը ծանուցուելուն պէս, Հռոմի բոլոր եկեղեցիներուն զանգակները կը սկսին զարնել, և շատ չանցած, նորընտրի Պապին անունը կը հեռագրուի աշխարհի չորս կողմը:

* * *

Անցնինք ուրիշ շահեկան մանրամասնութիւններու: Տեսանք թէ Պապերը ինչպէ՛ս կ'ընտրուին. շահեկան է նաեւ զիտնալ թէ ի՞նչ տեղի կ'ունենայ անոնց մեռնելէն վերջ: Պապին մահուան հաստատումը միշտ շատ հանդիսաւոր արարողութեան մը ծնունդ կուտայ. երբոր վերջին շունչը աւանդէ, կարտինալ մը կը մօտենայ անոր և ձեռքը բռնած արծաթեայ պղտիկ մօրճով մը երեք անգամ կը ծեծէ գանկը, զայն կոչելով իր մկրտութեան անունով: Եթէ պատասխան չստանայ, ներկաներուն դառնալով կ'ըսէ բարձրաձայն. — «Il Papa e realmente morto» (Պապը իրօք մեռած է): Նոյն վայրկեանին, Հռոմի բոլոր եկեղեցիներուն զանգակները կը հընչուին ի նշան Պապին մահուան:

Յետոյ, Պապին մարմինը կը զմուռի, և պապական հագուստներով մատուռ փոխադրուելով կը ղետեղուի յատկապէս պատրաստուած մահաբեմի մը վրայ, որուն շուրջը մոմեր կը վառին: Ամբողջ երեք օր մեռելական պաշտօն կը կատարուի: Երկու և երեք միջեւ չորս ազնուական-պահնորդներ կը հսկին մարմինն շուրջը: Զորրորդ օրը, Պապին մարմինը կը փոխադրուի Ս. Պետրոսի եկեղեցին և Ս. Հաղորդութեան մատուռին մէջ կը զետեղուի անա՛նկ զիւրքով մը որ ոտուքները դուրս մնան վանդակապատէն և հաւատացեալները կարենան զանոնք համբուրել:

* * * Ինչպէս յայտնի է, Լէոն ԺԳ. Պապը սքանչելի լատինագէտ մըն էր, և թողած է բաղձաթիւ լատիներէն բանաստեղծութիւններ, որոնք միշտ հիացման առարկայ դարձած են: Ոչ նուազ գովեստով կը յիշատակուին նաեւ իր կոնդակները, — միշտ լատիներէն բանաստեղծութիւններ, որոնք հիացման առարկայ դարձած են: Նոյնքան գո-

վեստով կը յիշատակուին նաեւ իր կոնդակները, — միշտ լատիներէն դրուած, — որոնցմէ գլխաւորներուն կարգը դասուած են՝

1. Էօթերնի Բաքրիս (պատրաստուած 1879ին), որուն մէջ հրաւէր կը կարգայ բոլոր եպիսկոպոսներուն՝ մասնաւոր խնամով ուսումնասիրել Ս. Թովմաս Ագուլինացին: Ինք միշտ հիացող մը եղած է Ագուլինացին, «որուն քաղաքական սկզբունքները ուսած է, որոնք պիտի կրնային մարդկային ընկերութիւնը փրկել, եթէ երբեք պէտք եղած արձագանգը գտնէին»: Լէոն ԺԳ. կրօնական ուսումնասիրութեանց և մասնաւորաբար Ագուլինացիի գործերուն ուսումնասիրութեանց համար Ահադեմի մը հիմնած է և ամբողջովին տպագրել տուած է Ագուլինացիի գործերը:

2. Իսմորթալի Տէի (պատրաստուած 1883ին) որ կը բովանդակէ Լէոն ԺԳ. ի մտածութիւնները՝ հանրային իրաւանց մասին: Ամէն զօրութիւն Աստուծմէ կու գայ, կ'ըսէ, և, ինչ որ ալ ըլլայ կառավարութեան մը ձեւը, բոլոր Վեհապետները պարտաւոր են միշտ աշուրնին դէպ ի Աստուած սեւեռած պահել, և իրենց պարտաւորութիւն մը նկատել կրօնքին պաշտպանութիւնը և անոր անխաթար պահպանումը: Միւս կրօնքներէն կը գերադասէ կաթոլիկութիւնը, և կը հրաւիրէ բոլոր կաթոլիկները որ բարի օրինակներով աշխատին տարածել քրիստոնէական դաւանութիւնները: Այդ կոնդակով, Լէոն ԺԳ. չի պախարակեր Վեհապետներուն կողմէ ամէն կրօնքի նկատմամբ ընդունուած հաւասարութեան սկզբունքը, բայց կը յայտարարէ թէ Եկեղեցին չարտօնիր ատանի բան մը:

3. Լօմանոմ Ժեմուս (պատրաստուած 1884ին), որով կ'ամբաստանէ Ֆրանս-Մասօնները թէ Եկեղեցւոյ կործանման կ'աշխատին: Այդ կոնդակով, Լէոն ԺԳ. կը հաստատէ Ֆրանս-Մասոններուն նկատմամբ իր նախորդներուն կողմէ տրուած բոլոր վճիռները, և ո՛չ թէ միայն կը յանձնարարէ անոնցմէ զգուշանալ, այլ կը յորդորէ որ կաթոլիկները ամէն միջոցներով մարտնչին անոնց դէմ, զորօրինակ ընկերութիւններ հիմնեն սուրբի մը անունով, և ակադեմիսներու հաստատութեամբ

եկեղեցոյ շուրջը խմբեն երիտասարդներ, գործաւորներ, ընտանիքի հայրեր և մայրեր, նոյն իսկ գրչի մարդիկ:

Ոչ նուազ նշանաւոր են նաև իր այն Կոն-դակները զորս հրատարակած է Ֆրանսայի մէջ ամուսնալուծութեան օրէնքին վերահաս-տատման, ինչպէս նաև Կաթոլիկ եկեղեցիէն անկախ քրիստոնեայ եկեղեցիներու միացման խնդրին առթիւ հրատարակած կոնդակները: Ունի նաև բազմաթիւ ոտանաւորներ, որոնց-մէ վերջինը, որ կաթոլիկ եկեղեցւոյն ու ժո-ղովուրդին ուղղուած հրաժեշտ մըն է, գրած էր վերջին հիւանդութենէն օր մը առաջ, և պնդած որ անմիջապէս հրատարակուի:

*. Լէոն Ժ.Պ. 258րդ Պապն է, Ս. Պետ-րոսն ալ հաշուելով: «Պապ» անունը սակայն, առաջին անգամ ըլլալով Գրիգոր Է. րդ ա-ռած է 1081ին: Այդ Պապը առաջին մեծ քա-ղաքագէտը եղած է և այդ տեսակէտով քի-չեր միայն ունեցած է իրեն յաջորդ, — ինչպէս Մեծն Գրիգոր, Յուլիոս Բ., Լէոն Ժ., Սիքս-—Քուէնթ, Իննօզենթ Գ., Պիոս Թ. և Լէոն Ժ.Պ., որոնք կրօնային պետեր ըլլալուն հետ մեծ քաղաքագէտի համբաւ մը թողած են:

Լէոն Ժ.Պ. չորրորդ Պապն է՝ երկարատեւ պաշտօնավարութեան տեսակէտով: Ս. Պետ-րոս պաշտօնավարած է 35 տարի, Պիոս Թ. 32 տարի, Գրիգոր Թ. 26 տարի: Իսկ Լէոն Ժ.Պ. պաշտօնավարած է 25 տարի: Այս չորս Պապերէն երրորդը, Գրիգոր Թ.՝ հարիւրամեայ մեռած է, միակ ըլլալով բոլոր Պապե-րուն մէջ: Այս չորսէն զատ, տասը Պապեր միայն 22 տարիէն աւելի ապրած են:

Պապերու մեծագոյն մասը Իտալացի եղած է: Իտալացիներէն զատ, Պապ ընտրուած են նաև 15 ֆրանսացի, 13 յոյն, 8 սուրիացի և 1 անգլիացի կարտինալներ: Այս պահուս, Լէոն Ժ.Պ. ընտրող 64 կարտինալներէն մէկ հատ մը միայն ողջ է, Կարտինալ Օրէլիան, որ իր այդ հանգամանքով մասնաւոր պատիւ-ներու պիտի արժանանայ յառաջիկայ ընտրա-կան ժողովին մէջ: Ինչպէս ըսինք արդէն, պապական ընտրութեանց միջոցին՝ նախորդ ընտրութեան մը մասնակցած կարտինալներու աթոռը բացառաբար կանանչ լերպատով ծած-կուած կ'ըլլայ:

Յառաջիկայ պապական ընտրութեան մաս-նակցող կարտինալներուն մէջ, Ֆրանսացիք չորս ներկայացուցիչ միայն պիտի ունենան, — Բարիզի Արքեպիսկոպոս Կարտինալ Ռիշար, Կարտինալ Պուայէ, Կարտինալ Լանժէնիօ, և Կարտինալ Բէռօ: Այս վերջինը անդամ է Ֆրանսական Ակադեմիին:

ՄԷԴՍԷՏԷՍ

ՔԱՍՈՅԼ



Բասդել մը, քոռմած ծաղիկ երբեմնի, Միսիկ ուրուանկար, իրիկուան պաւսկեր, Ուր զանգակասունն, անդի՛ն, կը կանգնի, Երբ գիւղ կը դառնան դաշտն գեղջուկներ:

Ժամանակէն, յամր, աղտոսած որմի՞ Մը վրան կախուած, եւ զոր չի պահեր Ապակին՝ գիծերն անոր միառմի եւ բոլոր գոյներն են վա՛ղ ինքնաւեր:

Սիրուած դեմքերն ալ հոգւոյն մեջ այնպէս կը բօցնին օսկաւ՝ ժամանակն անգութ կ'աւրէ երջանիկ հետքերն անոնց շո՛ւս:

Կը հիւծին յուսերն իսկ բօս եւ օտարամ... Ու մեռեալներն՝ որ լացուցած են մեզ՝ Կը մեռնին սիրին մեջ երկրորդ անգամ:

ՎԱՀՍՆ ՄՍԼԷՋԵՍՆ

ՄՅՏՔԻ ԿԱԹՅԼՆԵՐ

Ճաշի առեն չի կարդալ, գործի առեն չըբօսնուլ, սիրոյ առեն գործի չի խորհիլ:

— Այսօր այնչափ շուտ ու այնչափ չափ հետեւող կայ նորաձեւութեան որ շատ չան-ցած կը հասարակնայ ան: Ըստ իս, աւելի լաւ է նորաձեւութեան գլխովին հակառակը ընել: Ատիկա հանրային կարծիքի դիմագրա-ւում մը ու originalité մը միանգամայն պի-տի ենթադրել տար:

— Արձակիս մէջ՝ դադարաւորին չափ ալ սիրահար եմ ձայներու ներդաշնակութեան, ինչպէս պիտի ըլլայի յանգերու սիրահար մը՝ եթէ ոտանաւոր զբող ըլլայի:

— Կը կարծեմ որ, այն օրէն ուր պիտի զրկուիմ կամ արդիւրեւ կարգալէ, պիտի սկսիմ իրապէս դժբաղդ ըլլալ: Կարգալը տարբեր կեանք մը ապրիլ է: Շատ բան կարգալը շատ մը տարբեր կեանքեր ապրիլ է և ինչ կայ բաղմատականջ էութիւն մը դոհացընելու աւելի կարող բան:

— Շատ կարգալը երկու առաւելութիւն միանգամայն ունի: Նախ՝ գրելու ցաւը կը մեղմէ: Յետոյ, եթէ նոյն իսկ բաւական տըրամադրութիւն դոհաց ներսիդիդ՝ գրելու, դոհէ աղէկ գրելուդ մեծապէս կը սատարէ ան:

— Ինչ որ է Տօնքիշօթը այլուր, նոյնն է տիրացուն մեր մէջ, կլիմայի տարբերութիւննով միայն:

— Մարդ որչափ լախնցնէ իր միտքը՝ այնչափ կը մօտենայ Աստուծոյ և այնչափ կը հեռանայ... եկեղեցականներէն:

— Ես կը կարծեմ որ գեղեցկութիւն ըստաձը մարդս և մաղերուն մէջն է: Առանց թել մը մաղի կամ մօրուքի՝ մարդ էակ մը կրնա՞ք երեւակայել որ հրէշէ մը տարբերութիւն չունենայ:

— Զերմակ մաղերը ու մօրուքը ամենէն աւելի սիրած բաներս են: Ես կը դոհամ որ եթէ ծերութիւնը որ և է ուրիշ *attire* չունենայ իսկ, միմիայն ատոնց սիրուն կ'արժէ տարիներու բնոյ ջաշքել:

— Պիտի ուղէի որ մէկը, կեանքի ինչպէս Գրականութեան մէջ դրամ չափելէ կամ փառքի տիրանալէ առաջ, աշխատէր *distingué* ըլլալու:

— Գրիչին պատճառած վէրքը, ամենէն թունաւորն է վէրքերուն, նախանձի ամենաբարձրագոյն *dose* պարունակելուն համար: Բայց ամենէն ալ անվնասն է, նոյնիսկ օգտակար՝ գրիչի մարդուն համար մանաւանդ, կարգ մը թունաւոր դեղերու նման:

— Կը խորհիմ որ մեր մէջ աղէկ գրելու համար խնամքով ու քիչ գրելու էր: Թէ՛ լաւ, թէ՛ առատ արտադրելու համար չի բաւեր չիւկօ մը, Զօլա մը ըլլալ՝ այլ անոնց միջոցներն ալ ունենալու է:

— Ոչինչ այնչափ զիւրիմ է, որչափ յանուն սկզբունքի դիմացինը խիստօրէն դա-

տել ու դատապարտելու: Անոր բոլորովին հակառակն է երբոր խնդիրը մեր վրայ է: Ատոր համար է որ օրինակի համար յանուն բարոյականի ամենէն խստադատ մարդը ամենէն քիչ բարոյականի տէր է շատ անգամ:

— Ամէն բանի հիմը դրամն է: Ինչ հաստատուն սկզբունքներ, անխախտ բարոյականներ, աննկուն նկարագիրներ, կեանքի փոթորիկներու հետեւանքով եկեր փչրուեր են չքաւորութեան լերկ ապառաժին վրայ:

— Լացը ամենէն խնդճ ու տկար, բայց միեւնոյն ատեն ամենէն ալ զօրաւոր ու պատկառելի բանն է աշխարհի վրայ: Ապառաժէ սիրտ մը պիտի հալէր անոր առջեւ: Ամենէն չար մարդը անգամ կ'աղնուանայ երբոր կուլայ: Ատոր համար է որ, շինծու խանդաղատանք մը, սուտ արցունք մը աւելի կ'արժեն ինծի համար, քան անկեղծ անդգաճութիւն մը:

— Առողջութիւնը դերագոյն պայմանն է ֆիզիքական յատկութիւններուն, ինչպէս քիչողութիւնը՝ միտքի կարողութիւններուն: Երբոր այս երկուքը միանան աշխատութեան, կը բաւեն բարձրացնելու համար մարդս այնչափ վեր՝ որչափ ուղէք:

— Պտըտիլ, տեսնալ, գրել ու կարգալ, ահա լուադոյն շրջանալը միտքի մարդուն ու կեանքին համար:

— Եթէ կարգալը՝ երեւակայութիւնով տարբեր կեանքեր ապրիլ է, ճամբորդելը միեւնոյն բանն է իրականութեան մէջ: Ոչինչ անոր չափ հաճելի, հասունցնող, փորձառու ու *viril* ընող:

— Որչափ քիչ նախանձող ունենամ այնքան պիտի համոզուիմ որ բան մը չեմ արժեք, և հակառակն ալ փոխադարձաբար:

Ջի.Պի.Է.—ՍՍՐԱՅ.

Ներսէս Շահլամեանց, տաղանդաւոր թէնօզը, որ ջղային հիւանդութենէ վարակուած կը դարմանուէր Գանձակի մէջ, վերջերս Բեդերսպուրկ փոխադրուեր է:

Ներսէսի երկաթիւնայ Կարխուն կայարանը 1904ի սկիզբէն պիտի կոչուի Էջմիածնի անունով:

ՆՈՒՒՐԱԿԱՆ ՈՒՏԱՏԵԼԻՆԵՐ

ՄՇԱՅ ԱՌԱՋՆ. ԹԵՄԻՆ

Այս անգամ, Կեսարիոյ հնասէր ու բանասէր առաջնորդին՝ Դեր. Տ. Տրդատ եպիսկ. Պալեանի ուշադրութեան կը ներկայացնեմ, Մասիսի միջոցաւ, Մշոյ թեմի շէն կամ անաստ վանքերու մէկ ցուցակը, զոր հաւաքած եմ մասնաւոր հետաքրքրութեամբ, ու Սրբողան գրասէրին Վանօրայք Հայոցի ծանօթ աշխատասիրութեան զիւրութիւն մը ընծայելու նպատակով: Թէպէտ՝ հակառակ իմ փափագիս՝ կարելի չէ եղած գոհացուցիչ տեղեկութիւններ ձեռք բերել իւրաքանչիւր միաստանի հիմնարկութեան ու յարակից հանգամանաց մասին, որովհետեւ մեր անձուկ մասնագէտութեան մէջ, ինչպէս յայտնի է, կը պակսին բազմադիմի և ընթերցողին հարցասիրութիւնը գոհացնող զանազան խընդիրներ ու տեղագրականներ: Այս կարգի պակասներ թերեւս լեցուէին ձեռագիրներով, եթէ անոնք ալ մաշած, կորած, անհետացած չլային ստուար մեծամասնութեամբ: Դրեթէ անուանց ցանկ մըն է այս ցուցակը, որ կրնայ յատկանշել կարգ մը անծանօթ մեծաստաններ:

Ձանց կ'ընեմ կրկնել ծանօթ տեղեկութիւնները Մշոյ արդի շէն վանքերու մասին, որոնք արդէն երկարօրէն յիշուած են նախնի մասնագէտութեան մէջ: Պարզ ցանկ մըն է այս հաւաքածոն, որ մասնաւոր ուսումնասիրողին ջանքովը կրնայ ընդլայնուիլ ու խրտանալ:

Լաւ կ'ըլլար, ուրիշ թեմերու մէջ ալ գրի առնուէին դարաւոր հնութիւն եղող անաստ վանքերու անունները, տեղական աւանդութիւններով:

Ահաւասիկ իմ պատրաստած համեատ ցուցակս. —

1. Մշոյ Ս. Կարապետի վանք, կառուցեալ յանուն Յովնանու Կարապետի՝ ձեռ. Ս. Դրիգոր Լուսաւորչի յամի 302. ունի վկայարաններ՝ յանուն Ս. Կարապետի և Աթանաղինեայ, Ս. Ստեփաննոսի, Ս. Դէորգայ,

Ս. Դրիգորի, Ս. Աստուածածնայ, Ս. Յարութեան, Ս. Խոտաճարակաց, Ս. Պետրոսի, Ս. Սարգսի և Ս. Պօղոսի, և տաճար մը գեղեցկաշէն, եռագմբէթ՝ իննականն դարաստանին մօտերը:

2. Ս. Յովնանու կամ Եղրդուտի վանք, կառուցեալ յանուն Ս. Յովնանու՝ ձեռ. Ս. Դրիգորի՝ յամի 312. Տաճարն եռագմբէթ՝ Սիմ լերան բազուկներուն վրայ. վկայարաններ յանուն Ս. Յովնանու Աթանաղինէի, Ս. Ստեփաննոսի, Ս. Աստուածածնի, Ս. Դէորգայ և Ս. Սարգսի: Հոս կը պահուի չիշ իւղոյն և արծուաբեր կենաց փայտը:

3. Ս. Առաքելոց վանք, կառուց. յանուն Ս. Առաքելոց՝ Դուկասու և Անդրէասայ, ձեռ. Ս. Դրիգորի յամի 312. վկայարանք յանուն Ս. Դէորգայ, Ս. Անդրէասայ, Ս. Աստուածածնի, և տաճար երկագմբէթ, վանքի միջին լոռաւ է վանք Թարգմանչաց, Տիւրիկատար սարին ստորոտը, հոս են գերեզմանք Դաւթի, Ղազարու, Ասողկայ, Մամբրէի եւլն:

4. Մատնավանք կամ Մատռավանք յանուն Ս. Կարապետի և Աթանաղինեայ՝ ձեռ. Ս. Դրիգորի յամի 302, տաճարն միագմբէթ, վաղեմի:

5. Ս. Աղբերիկ (կամ Վանդեր) կառուցուած Թ. դարուն՝ յանուն Փրկչին Յիսուսի, տաճար գեղեցկակերտ, ունի վկայարաններ յանուն Ս. Ստեփաննոսի և Ս. Աստուածածնի. հոս պահուած էր Բրիտանիոյ ընկերութեն մէկը. նշանաւոր է Գործել-Յարոյց անուն կենաց փայտին Ս. խաչը եւլն:

6. Մատին—Առաքելալ՝ կառուց. Թ. դարուն՝ յանուն Ս. Պետրոս Առաքելոյն, (ուր կայ ճկոյթն նոյն Առաքելոյ) Մարութայ լեռան արեւմտակողմն, վկայարան յանուն Ս. Աստուածածնի, տաճարը վաղեմի շէնք մըն է:

7. Ս. Դանիէլի վանք, յանուն Ս. Դանիէլի ծերին Ասորոյ, ի Պուլանդ դաւառակ, յամի 360, ունի վկայարան Ս. Աստուածածնի, վկայարան Ս. Դանիէլի:

8. Առաջին տաճար և աթոռ Հայրապետանիստ՝ կառուց ձեռ. Ս. Լուսաւորչի յամի 302, այժմ աւերակ (1390էն ի վեր). կայ մի-

այն փայտաշէն եկեղեցի մը և գետնափոր նկուղ մը՝ դամբարանն Ս. Սահակայ Հայրապետին։

9. Ս. Աթանաղինէի վանք, Մշոյ հարսուր լեռնաշղթային մէջ՝ աւանդութեամբ Ս. Լուսաւորչէ կառուցուած։ 35 տարի առաջ կ'ամառանայ, 1886ին կը վերաշինուի մասամբ մը, հիմայ դարձեալ ամայի։ Տաճարը քարուկիր վաղեմի շէնք մըն է, ունի բոլոր տիքը անտառ և ջերմոկ բժշկութեան։

10. Ս. Գասպարայ վանք, յանուն ի Բեթլէհէմ Դրիստոսի երկրպագու երեք Մողեքէն մէկին, որ վերադարձին վախճանքի է հոն և թաղուեր։ Այգեստանքը յորջորջուած Մողաց և գլուղ մի՝ Մոկունք։ Հարիւր տարուայ կոնդակի մը մէջ, երկարօրէն դրուած են այս մասին՝ աւանդութիւններ։ Այժմ աւայի ու լի դերբուկներով. Մուշէն կէս ժամ հեռու՝ դէպ արեւելք։

11. Մամկայ վանք, Եղրդուտի Ս. Յովհաննու վանքին հարաւակողմն՝ 1 ժամ հեռի խոր ձորակի մը վերեւ՝ բարձրաւա՛դակի մը վրայ քարակոյտ մը։

12. Ս. Գէորգայ վանք, Մշոյ դաշտին Ապրիլահար գեղին արեւելքը, 1 քառորդ ժամ հեռի, ընդարձակ հողերով. այժմ իրճթաճեւ մատուռ մ'ունի—լուստուն, ուր հայ մամիկներ ճրագներ կը տա՛ն վառելու շաւթ և տօն օրեր։

13. Ս. Կիրակոսի վանք, Մշոյ Բերդակ գեղին արեւելքը, լի խաչաքարերով և դերբուկներով՝ աւերակ. Խաչի Պահոց չըջաւայքէն ուխտի կ'երթան։

14. Ս. Կարապետի վանք, Մշոյ Երիշտէր գեղին հարաւակողմն, աւերակի կոյտ մը, հին գերեզմաններ, այգեստանք և ջերմոկ ախտաժէտաց։

15. Ս. Ներսիսի վանք, Մշոյ Թիւ գեղին արեւելքը, պարիսպներու դերբուկները դեռ կ'երեւին։ Այսքան մըն է աւանդութիւն. Ս. Ներսէսի անունով կոչուած է, բայց թէ հոն թաղուած է արդեօք ի վերջոյ, բան մը չենք դիտեր. գիտենք սակայն թէ այդ կողմերում շատ գտնուած է և մօտ է նաեւ ուրուկներուն համար իր շինած ապաստանարանն ալ։

16. Կարմրօ վանք, Մշոյ Մառնիկ գեղին Հարաւ Արեւմուտք, 1 քառորդ հեռի, ամայացեալ, կը մնան դեռ դերբուկները գմբէթին, տաճարին ու պարիսպներուն։ Ստուարաթիւ միաբանութիւն մը ունեցած է, ըստ աւանդութեան եւ բարգաւաճ վիճակ մը՝ ի հնունս։

17. Ս. Գլորգայ վանք, Մշոյ դաշտ՝ Պաղլու (պարիս) գեղին կուշտը դէպ արեւմուտք, այժմ աւերակ։ Դերբուկներէն ելած եւ ՈՅԹ թիւը կրող խաչքարի մը վրայ դրուած էր—«Նորոգեցաւ պարիսպն վանուցս...»

18. Ս. Կարապետի վանք, Մշոյ դաշտ՝ Սիմի սարերուն վրայ, Շմլակ գեղին հարաւ, ամայացած, ունի քարուկիր մատուռ մը, եւ անուանի ջերմոկ մը, որուն ջուրը կը տանին հիւանդներուն։ Այդ ջուր բերողը՝ երբեք չպիտի խօսի, ետեւը չպիտի նայի (ջերմոկէն մեկնած ասեմն) մինչեւ հիւանդին քով երթայ։

19. Ս. Կարապետի վանք, նոյն լեռնաշղթային վրայ՝ Փեթար անուն գեղին արեւելահարաւ, այժմ աւերակ է։

20. Ծիծեռնոյ վանք, ծանօթ է Զենոբ մատենագրով, Ներսէս Շինող Կաթողիկոսին օրով կառուցուած իր 650ին, այժմ աւերակ՝ Ս. Աթաղինէի վանքէն 1 ժամ հեռաւորութեամբ թաւուտ ձորակի մը քով։

21. Կարմրօ վանք, Ս. Կարապետի վանքէն 5 ժամ դէպ հիւսիս՝ Վարդօ գաւառակին մէջ՝ Կիւնատէմիր գեղին քով, շատոնց ամայի. 25 տարի յառաջ երազով մը՝ գիւղացիները պեղումներով երեւան կը բերեն տաճարը, որ հիմայ մատուռի վերածուած է՝ Նորելուկ անունով, ուր ուխտի կ'երթան։

22. Ամենափրկի վանք, աւերակ, գեղի մը սարաւանդին վրայ, փոքրիկ կոնքնի մը, խաչքար մը դերբուկ և աղբերակ մը կը մնան՝ նշան։

23. Ս. Յակոբ, մենաստան ի հնունս, այժմ Տարապի անունով, ուխտատեղի, ունի ջերմոկ և նուիրական ծառաստան։

24. Կարմրօ եկեղեցի, Ս. Կարապետի արեւելք, 2 ժամ հեռի, աւերակ, ունի ջերմոկ

եւ նուիրական ծառաստան—իսպան գեղի մօտերը :

25. Ս. Աստուածածին, Աւզուտ գեղին արեւմուտքը՝ 20 վայրկեան հեռի, աւերակ Մշոյ դաշտին արեւելք :

26. Ս. Սիոն, Ս. Աստուածածնայ մօտեր, քարուկիր, եկեղեցին դեռ կանգուն, նորոգութիւններ կրեր է ՈԿ,—660 եւ ՌՃԿ—1160 (առւմարի) թուականներուն, մօտակայ բարեպաշտներուն ուխտատեղի, Գրգուռ սահմաններ :

(Շարունակելի)

ԳԵՂԱՍ

ԻՏԱԼԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ (*)

ՏՈՒԱՅՏԱՆՔ

(ՆՈՐԱՎԷՊ)

ԳՐԵՑ ՄԱԹԻՆՏ ՍԷՌԱՍ

I

Երկու ընտանիքները ա'լ սկսած էին պայքար մղել իրարու դէմ. ա'լ անպակաս էին ստակի վատնումները, անհասանում դատերը, ու դատասէրի տենչանքներով է որ կը վարէին, դայրոյթով, բուռն փափաքներով ու մոլեգնօրէն : Բնականաբար, միշտ սնոտի բաներու վրայ էր որ խնդիր կը յարուցանէին. առուակ մը որ ուղղութիւնը կը փոխէր, այժմը որ ցանկի մը վրայէն կը ցատքէր, թփիկ մը որ ցանկի մը կը յիւստէր. ասոնք էին ասիւ, որոնք նորանոր կռիւներու պատճառ կ'ըլլային : Ու դրոշմուած թուղթերը կը տեղային, ու ատենանի հրաւերները կը կրկնապատկէին, ու դատաստանները իրարու կը յաջորդէին՝ իրարու հետ շփոթուելու աստիճան չուտ, ու ծախքերը կը շատնային, ու

(*) Մ. Խ.—Սոյն գողտրիկ նորավէպին թարգմանիչը յանձնած է մեղ նաեւ ամփոփ ուսումնասիրութիւն մը Տիկին Մաթիլտ Սէնտօի՝ իտալացի նշանաւոր գրագիտուհիին վրայ, զոր պիտի հրատարակենք նոյնպէս այս խորագրին տակ :

փաստաբանները կը հրճուէին, վստահ ըլլալով թէ, իրողութիւններու ընթացքէն վերջ, այդ դատերը իրենց տղոց պիտի փոխանցուէին իբր ժառանգ : Կարելի էր բացատրել թէ այս թշնամանքը ինչպէ՛ս ծնած էր Բասքալիէնց ու Տէրիքաէնց միջեւ : Իրարու դրացի էին քաղաքը, ինչպէս նաեւ գիւղը, և երբ իրարու հանդիպէին՝ չուն ու կատուի պէս կը նայէին մէկըմէկու. երկու ընտանիքներուն կիները տարբեր տարբեր եկեղեցիներ կ'երթային. եթէ Բասկալիէնց օրիորդները կապոյտ շրջագգեստ հագնէին, Տէրիքաէնց օրիորդները վարդագոյն արդուզարդ կ'ընէին իսկոյն, այսպէս, իրարու անհամաձայն գըտնուելու հետզհետէական հնարքներ փնտռելով : Աւելցուցէ՛ք բարբաճները, բամբասանքները, չարութիւնները, անպարկեշտ անարկութիւնները, իրարու կրկնուած աղտոտ բառերը, և պիտի ունենանք չափը անոնց անարգանքներուն :

Այս միջոցին էր որ, Շառլ, Բասկալիէնց անդրանիկը, ու Մառի, Տէրիքաէնց կրտսերը խենթի պէս սիրահարուեցան իրարու...

Սէրը, պզտիկ քաղաքներու մէջ, փոփոխուն այլազանութիւններ չունի. ընդհանրապէս յարաբերութիւնները տղայ հասակէն կը սկսին, յետոյ կը յաջորդեն պահուրտութիւններու միջոցին, ընտանեկան տոներու մէջ կը շարունակուին և կ'աւարտին քաղաքապետին ու գեղին երէցին առջեւ : Ասոնք սրտի այն տեսակ զգացումներ են, զորս պառաւները կը հասկնան, կը հսկեն, որոնց պատճառը կ'ըլլան, զորս մայրերը կը քաջալերեն, և զորս ամէն մարդ գիտէ,—անջիղ, անկորո՛վ զգացումներ, առանց արցունքի, առանց աղապատանքի, զուրկ հաճոյքէ, խաղաղիկ, շատ դանդաղ ու շատ պաղ... : Բայց Շառլ Բասքալի բաղդը ունեցած էր անգամ մը տասներէնիք օր Նաբօլիի մէջ անցընելու, ինչ որ իր վրայ ազդած էր՝ դաւառի սովորութեանց մասին զարմանք զգալու, ու Մառի Տէրիքա, գիշերը, վէպի հերոսուհիներու անբախտութեանց վրայ կուլար ու կը նախաձէր, որովհետեւ կը զգար թէ իրենց համար բացառիկ սէր մը պէտք էր : Իրենց սիրոյն սկզբնապատճառը եղաւ նախ գաղտագողի

նայուածք մը, մեղմօրէն մըմնջուած խօսք մը, պատշգամէ մը նետուած շահօքրամ մը, կարճութիւն մը ու գեղնութիւն մը՝ հանգիւ պոմներու պահուն... Յետոյ, գործաւորութիւն մը որ օրականով կ'աշխատէր Մառիի ծնողքին տունը, տոմսակ մը ինչպէս նաև անոր պատասխանը կը տանէր յօժարակամ, յետոյ պզտիկ նամակ մը, յետոյ երկայն նամակ մը, յետոյ ութը—տասը էջով այն նամակները, որոնք տարիանքի ամէնէն ծայրայեղ աստիճանը կը նշանակեն:

Որքան կարճատեւ եղան, աւաղ, երկու սիրահարներուն ուրախութիւնները և որքան ալ վաղահաս՝ ցաւերը: Ջարմանքով նշմարեցին անոնց սէրը, հետեւեցան անոնց, երէւան հանեցին, ու այն ատեն, հայրենին, ա'լ սկսան իրենց վրէժխնդրութեան շանթերը տեղացնել հէք տղոց դէստոն: Պատուհանները գոցեցին, պատշգամին դրան կոպղերը դրին, թաղարներուն շահօքրամները հաշուեցին, արգիլեցին տղոց պառոյտները, ամէն կիրակի տարրեր ատեններու մէջ եկեղեցի զրկեցին զանոնք,—բայց անոնք կը շարունակէին դեռ իրար սիրել: Սաստերը, ձանձրացուցիչ խճրատները, արգելքները, խոչընդոտները՝ այդ բոցը ա'լ աւելի արծարծելու, ա'լ աւելի հորահրելու կը ծառայէին. ձմեռ գիշերները, Մառի ան'կողնէն կ'ելլէր, կը հադուէր, շալի մը մէջ կը վաթթուէր, մուճակները ոտքը կ'անցընէր, ու շունչը բռած, վախէն դողդոջուն, սանդուխներէն կ'ջլնէր ու կ'երթար առաջին յարկի լուսամուտներէն մէկուն առջեւ արմուկով կրթնելու, երբ արդէն երիտասարդը փողոցին մէջ կը սպասէր, պատին յետոյ: Երեք չորս Ժամ այսպէս կը խօսէին առանց փոքրիկ անհանգստութիւն մը իսկ զգալու ցուրտէն, անձրեւէն ու անքնութենէն, առանց զիրար տեսնելու կը խօսակցէին, իրարմէ հինգ մէթը հեռու, ամենափոքր շշուկի մը միջոցին լռելով, ու միշտ վախնալով թէ գուցէ ընդմիջութիւն իրենց այերային խօսակցութեան միջոցին: Բայց ինչերնուն հոգ... Անոնք իրենց հոգիին մէջը ունէին լոյսը, արևը, դարունը, քաջութիւնը, աւիւնն ու խանդը:

Գիշեր մը սակայն, Մառիին եղբայրը,

չկրնալով քնանալ, ելաւ անկողնէն, սենեակին դուռը կիսաբաց դրաւ, ձայնի մըմունջ մը լսեց, ու վրայ հասնելով, կասեցուց զանոնք: Շառլին երեսին դոցեց պատուհանը, Մառիին ալ շահուն աստակ մը իջեցուց ու իր սենեակին մէջ փակեց զայն: Յաջորդ օրը, լուսամուտը պատով մը գոցած էին:

Ո՛վ դուք, հաւատարիմ սիրահարներ, որ կը տառապիք դժբախտ սէրով մը, երեւակայեցէ՛ք անգամ մը աննսեհութիւնը այս երկու երիտասարդներուն: Իրենց նամակները անընթեռնելի էին, վասնզի իրենց արցունքները գիրերը կը ջլէին, ու ամէն անգամ անոնք կ'անիծէին իրենց ճակատագիրը. հազար տեսակ խորհուրդներ յղացած ու լքած էին: Շառլ ուզած էր Մառիին հետ փախչիլ. բայց որովհետեւ հայրը իրեն դրամ չէր տար, իրենց ծրագիրը գործադրելու քարքնդոտ մը կ'ելլէր դիմացին, —չէին կրնար Նաբօլի փախելու համար ճամբու ծախք մը ճարել. պահ մը խորհեցան անձնասպան ըլլալ. այլ կըրցան հաճողուիլ թէ խնդիրը իր վերջնական լուծումը պիտի չգտնէր ատով: Տակաւ տակաւ, իրենց սէրը եղական հանգամանք մը ստացաւ, անոնք իրենց բախտը կ'անիծէին միշտ, ու չէին կրնար պառկիլ՝ առանց հաւատարիմ թուղթին վրայ թափելու իրենց ծայրայեղ վիշտը: Բաղաքին մէջ, ամէն մարդ անոնց անհաւատալի կիրքին, զրկանքներուն, նեղութեանց վրայ կը խօսէր. անոնք ընդհանուրին շահագրգռութեանը առարկան կը դառնային հիմա, և երբ օտարական մը գար, այցելել տալէ վերջ Հռոմէական ամիլիթատորնին աւերակները, Շառլին ու Մառիին պատմութիւնը կ'ըլէին անոր: Այս վերջինները, չփացած բնոնց ունայնատութենէն, պարագային յարմար դիրքեր կ'առնէին. Մառիի տոնոյն, տխուր, ուժաթափ, բնա՛ւ չէր խնդար, միշտ իր ցաւոտ օրերուն վրայ կը խօսէր, կը մերժէր ամէն զրօսանք ու կը ջանար նմանիլ Ժօզֆ Օնէի հերոսութիւններէն մէկուն. Շառլ, մենաւորիկ կը ճեմէր մեծաքայլ, դէմքը դժնդակ, սուեր հադած, ու գոհունակութիւն մը կը զգար ուրիշներու կարեկցութիւն ներշնչելուն համար... Ամենուրեք, իրենց սիրային մաքառումներուն ու

ժողովանակին վրայ կը խօսէին, և ով որ թարմ լուր մը ունենար անոնց մասին՝ ապահով էր թէ զինքը սիրով պիտի մտիկ ընէին։ Շառլ ու Մառի իրենց ժողովրդականութիւնը կը վայելցնէին։

II

Վերջապէս, երեք-չորս ամսուան շարունակական ոգորումներէ, առօրեայ արցունքներէ, հեծեծանքներէ ու կոծերէ վերջ, իրողութիւնները կերպարանափոխուեցան։ Կին մը երկու ծնողքներն ալ համոզեց, պերճախօսութեան մեծ ջանքերով, թէ այդ դատերը իրենց սուղի կը նստէին, օգուտ մը չէին քաղեր անոնցմէ, ընհակառակը, ու միմիայն փաստաբանները կը խնդային. թէ երկու երիտասարդները կը մեռնէին ապահովաբար՝ իրենց արգելուած սիրոյն պատճառաւ. թէ պէտք չէր խտաբարոյ ըլլալ Գրիստոսէն աւելի, որ իր թշնամիներուն ներեց... Այնչափ յամառօրէն աշխատեցաւ այդ կինը, որ երկու ընտանիքները եկան յանգեցան համաձայնութեան մը, որուն առաջին նիւթը եղաւ Շառլի ու Մառիի ամուսնութիւնը։

Կը խորհիք անշուշտ թէ այս անակնկալ լուծումը զիրենք երջանկացուց, իրաւ... Միայն թէ, պարտաւոր եմ խոստովանելու որ առաջին անգամ շատ խռոված կերպով տեսակցեցան։ Անոնք վարժուած էին զիրար հեռուէն տեսնել, թաքստոցին մէջ, ու իրենց խօսակցութիւնը չա՛տ ցած կատարել՝ մութին մէջ։ Իրարմէ չախորժեցան. տաղտկացան ու քիչ մը ծիծաղելի դտան զիրար։ Խօսակցութեան որեւէ նիւթ մը չունէին ու չէին գիտեր ի՞նչ ըսել, անհամբերութեամբ իրարմէ բաժնուելու վայրկեանին սպասելով։ Իրենց մեկնանին խառնելիք արցունք չունենալուն համար, ա՛լ դադրեցան իրարու գրելէ։ Կեանքը իրենց համար չա՛տ դիւրասահ ու հեշտին եղաւ, վամազի ա՛լ չկային դաժան ծնողքները որոնք իրենց յոյսերնին ի դերեւ հանէին, դադտնի բառեր չկային իրարու ալանջէ սահեցնելու, և ո՛չ իսկ խիզախ զիտաւորութիւններ՝ ապագան կազմակերպելու համար...։ Նշանածութեան չրջանէն ետքը, ա՛լ սիրտի ամուսնանային իրարու հետ՝ ու-

րիչներու պէս։ Ո՛չ ոք իրենց ուշադրութիւն պիտի ընէր այլեւս. հասարակաց օրէնքին մէջ մտած էին իրենք ալ ու այլեւս իբր հաւատարմութեան օրինակ պիտի չցուցուէին։ Այդ միջոցին, քաղաքին ուշադրութիւնը շատ ծանր պարագայի մը վրայ դարձած էր արդէն. բազմապիսի մը կինը՝ մեղաւոր համակրութիւն մը ունենալ կը թուէր օտարականի մը հետ...։

Երկու նշանածները իրենք զիրենք լքուած զգացին, ու մեծ պաղութիւն մը տիրեց մէջերնին։ Շառլ կը խորհէր թէ իր սիրականին այն առաքինութիւնը որ կը վառէր անոր նամակներուն մէջ, կը տոգունէր տանը մէջ. Մառի իր սիրականին ճաշկները հասարակ ու շատ սովորական կը դտնէր, ու կը մտածէր թէ, այս տեսակ սէր մը ասանկ տխմար ամուսնութիւնով մը վերջացնելը, իրա՛ւ որ անպատշաճ էր Օնէի հիացողի մը։ Գանի մը կծու խօսքեր ըրին իրենց. պատրանքներուն՝ որոնք իրականութեան գոյն առած էին և կեանքի յուսախաբութեանց մասին։ Յետոյ կուի մը ծագեցաւ, յետոյ ուրիշ մը...։ Իրիկուն մը, Մառի, բարկացած ձայնով մը ըսաւ.

— Շա՛ռլ, ձգե՛նք իրար...

— Շա՛տ աղէկ, բաժնուինք, պատասխանեց երիտասարդը՝ առանց տատամսելու։

Յաջորդ օրը, իր գործերուն պատճառաւ, իբր ճամբորդ կը մեկնէր. Մառի ալ Նաբօլի՝ իր մէկ ազգականին տունը գնաց՝ իրեն արժանի հերոս մը գտնելու համար։ Երկու ընտանիքներուն յարաբերութիւնները նորէն խզուեցան. Մառիին հայրը պատուհան մը բացաւ իր դրացիին բակին վրայ. այս վերջինը, վրէժը լուծելու համար, միջնորմի մը վրայ աղանեստուն մը չինեց. անմիջապէս ասոնց յաջորդեցին դատարանի կոչնագիր մը, երկրորդ մը. դատերը վերսկսան, ու այս անգամ, առանց իրաւախօհութեան։

Թարգմ. ՎԱՀՐԱՄ ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

ՀԱՐՑՈՒՄԻՊ ՊԱՏԱՍԽԱՆԸ

ՕՆՆԻԿ ԶԻՖԹԷ-ՍԱՐԱՖԻՆ

Շահարիկի Այրիմ խորագրով աղուոր մէկ նորալէսը՝ գաւառացի մանկամարդէ կնոջ մը ներքին ընտանեկան կեանքէն իր ելեւէջաւոր ու փոփոխիկ յայտնութիւններովը կը հարկադրէ ձեզի որ ուզէիք դիտնալ թէ որքա՛ն ծիշտ եղած կրնան ըլլալ ազատ սէրի վայելումները, ու գաղտուկ՝ այնքան անամօթօրէն կեղծել փորձուած ապօրինի յարաբերութիւնները, գաւառային չըջանականերու մէջ, հայ գիւղական համայնքին մօտը:

Փորձերնիդ նոր ու միանգամայն ներեցէք որ ըսեմ թէ յանդուգն ալ է, որովհետեւ ասկէ առաջ— ու թերեւս ասկէ վերջն ալ— մեզի գաւառացիներուս իսկ ուղուած էր պատկերացնել մեր միջավայրերու հայ կինը իր արտաքին ծածկոյթներէն ու յաւիտենապէս խաւոտ խօսուածքէն անբաժան՝ որ սակայն միշտ հեռու պահել ուզէ ինքզինքը տղամարդերու ներկայութենէն ընդհանրապէս:

Բոլոր այս արտաքին երեւոյթները, ու բոլոր այս միամտութիւնները իրենց աւելի կամ պակաս անկեղծ ու հաստատ մտադրականութեամբ ունենային թերեւս մասնաւոր կշիռ մը՝ եթէ աչքի առջեւ չգային գաւառային կարգ մը կեդրոններու մէջ գեղի հայ տարրին ընտանեկան կեանքէն սրտառուչ պատկերներ, որը օրին ու այնքան շատցած կրկնումներով:

Դեղերու մէջ է մանաւանդ որ պարզ ու ընտանեկան անկաշկանդ(!) վերաբերումները, աւելի բուռն համեմատութիւններ առնել սկսած են արդէն ու մարդ չզարմանար որ ինչպէ՞ս մանկամարդ աղջիկ մը վարժուած է պատանիի մը դիրքը գտնել ինքզինքը ցորենի օրօրուող արտերուն մէջը, կամ շատ անգամ ու գրեթէ միշտ բունի ու ալամայ հնազանդելու համար ամուսնութեան մը՝ որ տարիքի երբեակ համեմատութեամբ մը հաստ օտկոր ու մօր տեղ բռնող կին մը կը հանէ իր դիմացը, ու տղամարդ ամուսին մը որին համար

պիտի կրնար ըսել, «ի՞հ հայրիս տեղն է»:

Ու դեռ ինքզինքիս չպիտի թոյլ տայի մեղադրելու համար կիներ որոնք հէնց աւուսնութեան օրէն վերջը կը դատապարտուին տարիներով խարիքներու ճամբան նայիլ, ու կը զիջին ալ... երբ համբերութիւնը վերջ տուած է, ու այնքան բնական պէտքերու գոհացումը անհրաժեշտ դարձած այլ եւս: Կուզեն ըսել ուրեմն որ գաւառացի կինը կաղմական ու բնախօսական տեսակէտով բոլորովին տարբեր ստեղծուած մըն է:

Խարբերդի դիւղացիներուն ընդհանուր անկումը ու մասնաւոր տեղերու մէջ ափրօ դիտեան ախտերու վարակումը ինծի մտածել կուտայ հարկաւոր պանդուխտներու վրայ որոնք Մուշեցի կիներու նման չատ ջահիլ հարսեր ունին լքուած ու երեսէ ինկած, ու պանդուխտներ որոնք կը վերադառնան ալ ախտաւարակ ու մեռնելու մօտիկցող, կարծես վարակելու համար ամէնը:

Բայց միամտութիւն պիտի ըլլար, ընդհանրապէս խօսելով, հաւասար բաղդատութեան եղբեր գտնել գաւառներու մէջ ապրող հայ ժողովուրդին, հետեւապէս իդական սեռին ու ծովեղբրքներու կամ Եւրոպական կիներու միջեւ: Խալոտ ու պարկեշտ ալ են, սակայն ասիկա պատճառ եղած չէ որ հարկը իր օրէնքը չունենայ ու բնութիւնը իր հաշիւը չկարգադրէ ընդհանրապէս ամուսնական խնդիրներու սխալ կարգադրո մովր, ու անհեռ անամուսին կիներու բացառաւ լիւսմովը, քանի որ ամուսնաթողութիւնը բան մը չըսաւ դեռ ու ժողովրդային նախաօրաշարումը իր ամենէն կեղծիքոտ ու ապուշ տրամաբանութիւնը առաջ կը քշէ կոր:

Ու ինչի՞ վերադրել Տիարպէքիի կիներուն օղիի ու ծխախոտի ահարկու մոլութիւնը, որ սակայն մինակն ալ չէ. բաներ ինքնին որոնք շատ աւելի կշռեն պիտի բայրական ընտանեկան ծանօթ դեղձումներէն, այնքան ցաւալի ու աղտոտ:

Աս բոլորէն սակայն ա՛լ անպատճառ չպիտի ուզէինք վեր առնել գաւառացի պարկեշտութեան անուսով ամէն ինչ որ մեզ կըրոնար խաբել մեր յաւիտենական չովէններու

բերնովը, որոնց կեղծիքոտ մերադուլութիւնը ու ծայրաստիճան լաւատեսութիւնը, մանաւանդ հայ իգական սեռի բարեմասնութիւններու շուրջը, ծիծաղ կը շարժէ:

Անցեալ ամառ, Պոլիս գտնուելու ատենս Մանգուլմէի մէջ դաւառային կեանքէ մէկ քանի նորավէպերուս համար բարեկամներէս մէկը դիտել տուաւ որ շատ զարմանալի կը գտնէ ատոնք գաւառացիներու նկատմամբ, թէ այդ մերկ ու սրտառու չյայտնութիւնները ընտանեկան կեանքէ՝ անպատճառ ուրիշ ժողովուրդներու, Եւրոպական ու Պուստիան բարձրութեամբ կը պատշաճին. թէ դաւառի մէջ ամէն բան նահապետական է ու կոյս:

Պոլսեցի բարեկամիս այդ գիտողութիւնները չլրացին սակայն բան մը պակսեցնել այն ատեն ու անկէ առջի ալ իմ համոզումներէս, թէ դաւառային շրջանակներու մէջ ալ բարձրութեամբ ինկածութիւնը նոր չէ, ու տեղ տեղ շատնալ սկսած ալ են ապօրինի յարաբերութիւնները, ու մանաւանդ օրինակները չպիտի պակսէին ապօրինի ամուսնութիւններու, բացէն ու ամենուն առջեւ:

Նպատակ չունինք Ձիֆթէ-Սարաֆի հարցումին պատասխանելով տեսակ մը նախատինք բերել դաւառներու մէջ հայ գիւղացի կիկան. ընդհակառակը սակայն, մենք կուգենք միայն վեր առնել կարգ մը ճշմարտութիւններ, որոնք կը հաւտանք ալ որ շատ բան չպակսեցնեն դաւառայի մեծամասնութեան մը caractéristique բարեմասնութիւններէն իբր աղջիկ, իբր կին ամուսին, ու ընտանիքի տիպար մայր:

ԽՈՍՐՈՎ ԴԵՃԵՇԵՍԱՆ

ԿՆՈՋ ՄԸ

Քու աչեբուդ երկինքին մէջ է որ յիշու, կը բնակի գեղեցկութիւնն երկնալուր, կի՛ն որ բնա՛ւ չես մտածե՛ր բու վրադ Ուպէս քե դուն չկա՛ս, քեքե՛ւ ան սրտս...:

Թեքե՛ւ գերք շունչ մ'ամպի հիւսքէն փրցուած.

Անաբա՛ս գերք հորիզոնը դալկամած

Որ չունի բառ՝ բաց ի անհուն դալուկէն,
— Խորհո՛ւրդ անանձն որ կը հեւաս ան-
ծիղ քէն...:

Երբ եղ համար կը տառապի սիրս ինքնին,
Դուն վեհանդո՛ր աղո՛ւ բնութիւն երկ-
նային,
Շարունակես, Կանգուն, խորհուրդ սպի-
տակ,
Շուտա՛ն լեւան, գոր չի խռովե՛ր շունչ
մը օտ:

Դուն կ'ընգունիս բոլոր հրայրես ու հեծեր,
Թողուս փարիլ եղ Տեճիս հուրօ խօլա-
հեր,
Այլ չե՛ս բնաւ պատասխաներ դուն, ո՛վ
կի՛ն,
Ձի սրտս սխա՛ն մը Անկո՛ւմն է, ա՛ն,
Սրտի՛ն:

— Ինչպե՛ս սիրէ Սիրսն երբ գիտնայ Դեղն
ինքնին:

Ե. ԳՕԼԱՆՃԵԱՆ

ՈՒՐՈՒԱԳԻԾՆԵՐ

(ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆ)

ՄՈՒՇԵՂ ՎԱՐԴԱՊԵՏ

Վեց տարուան հովուական պաշտօնավարութեան մը միջոցին՝ երկրորդ անգամ ըլլալով Պոլիս եկած է Արաբկիրի հա հակրելի առաջնորդը, այնպէս անշուք ու պարզ կերպով սակայն զոր Պանտրմայէն կամ Ռօտօսթոյէն եկող քահանայ մը իսկ քիչ պիտի զըտնէր իրեն համար, սպասելով որ Պատրիարքարանէն պաշտօնեայ մը ու բարապան մը զրկուին զինքը դիմաւորելու և իր ժամանման յաջորդ չորեքշաբթին հրաւիրուի վարչական ժողովներուն ներկայանալ հանդիսաւորապէս: Մուշեղ վարդապետ այս ձեւակերպութիւններէն ո՛չ մէկուն հետամուտ եղաւ, ու Ղալաթիոյ քարափը ելլելուն՝ պանդուխտ տէրտէրի մը պէս հովանոցը ուսին

տակ՝ չիտակ Բերա, Ս. Պատրիարքին՝ քնա-
կարանը գնաց։ Թաղային ոչ մէկ եկեղեցիի
հետ կապուեցաւ, իբրեւ հիւր քարոզիչ, ինչ-
պէս սովորութիւն ունին ընել օգտփոխու-
թեան համար Պոլիս եկող առաջնորդները, և
Հիւանդանոց կատարած իր այցելութիւնը, —
իր առաջին ու սիրելի այցելութիւններէն
մէկը, — չի ծանոց լրագրաց մէջ ուր ամէն
մէկ եկեղեցականի անձնական պտոյաներն ու
բարեկամական տեսակցութիւններն իսկ ար-
ձանագրելու մարմանը մը կայ, իբր օրուան
լուրեր։ Միակ հանդէսը ուր տեսանք Մու-
շեղ վարդապետը, Իզմիրեանց Գրական Մըր-
ցանակի հանդէսն էր, ուր՝ սրահին մէկ ան-
կիւնը սքողուած՝ ուշադիր կը հետեւէր տե-
ղեկագրին ընթերցման։

«Արաբկիրի առողջնորդ» և «գրագէտ եկե-
ղեցական» տիտղոսները որոնք զուգընթաց
կը գործածուին իրեն համար, հպարտութեան
հով մը պիտի տային ո՛ր եւ է վարդապետի.
մինչդեռ Պատկերամատրի հեղինակը, համես-
տութեան ու պարզասիրութեան մարմնաւո-
րումը կը մնայ, ընդհակառակը, և այսօր ճիշդ
նոյնն է ինչ որ էր, երբ առաջին անգամ ե-
կաւ Արմաշէն, դեռ նորընծայ ու աղուամազ
աբեղայ, թէեւ՝ այդ թուականէն ի վեր՝
թէ՛ իբրեւ գրչի մարդ և թէ՛ իբրեւ հոգեւոր
պաշտօնեայ՝ լայն ճամբայ մը առած է, իր
միակ գնահատումն ու վարձատրութիւնը գըտ-
նելով վայելած փողովրդականութեանը մէջ։

Դժուար չէ զինքը ճանչնալ, առաջին հան-
դիպումով, առանց մէկուն ներկայացմանը
պէտք ունենալու։ Թուիս խարտեաչ մօրուք,
կապոյտ աչքեր, Ժպտուն դէմք, նիհար՝ բայց
բարեձեւ հասակ։ Առաջին տպաւորութիւնը,
զոր պիտի թողու ձեր վրայ, կնոջական ըս-
ուելու չափ փափուկ ու քնքոյշ տպաւորու-
թիւնն է իր դէմքին, բայց անգամ մը՝ որ
խօսակցութեան սկիւբ իր հետ, պիտի նըշ-
մարէք իսկոյն թէ այդ խաբուսիկ գրսերեւ-
ոյթին տակ՝ ի՞նչ առնական բան մը կայ,
սկսելով իր հնչուն ձայնէն որ տկարանալ
չդիտեր, մինչեւ իր առողջ դադափարներն
ու խոհուն տեսութիւնները որոնք տեղի չեն
տար որ եւէ վիճաբանողի առջեւ։ Վիճաբա-
նիլը իր նախասիրած ձեւն է արդէն խօսակ-

ցելու, և այն հատու ու զօրաւոր եղանակը
զոր ունի իր գրիչը՝ լրագրական վիճաբանու-
թեանց մէջ, իր լեզուին ալ յատուկ է, եր-
բեմն այնքա՛ն խստութեամբ զոր, իր հոգիին
չի թափանցող մը ու իր անկեղծութիւնը չի
ճանչցող մը, պիտի փորձուէր քրտ կարծելու։
Ասոնցմով հանդերձ, մեր լրագրութեան ինչ-
պէս նաեւ մեր կղերին մէջ՝ անխառն համա-
մըտութիւն մը չէ որ կը վայելէ այս երիտա-
սարդ վարդապետը, և իր ընդդիմախօսներն
ու քննադատողները հակառակութեան ոգին
չա՛տ առաջ տարած են իր դէմ, ատեն ատեն։
Ու չի գտնելով ըսելիք բան մը իր առաջ-
նորդական պաշտօնավարութեանը նկատմամբ,
իր գրչին վրայ յարձակեցան՝ մեղադրելով
զինքը թէ «բաց գրականութիւն» մը կ'ընէ, —
Ս. Գիրքէն առնուած իր քանի մը աւանդա-
վէպներուն առթիւ։ Մեր հասարակութեան
մէկ շատ փոքր մասին համար բերնի ծամոց
դարձած այս յարձակումը, սիրուած գրչինե-
րու դէմ, կեղծ պարկեշտութեան մը դիմա-
կաւորումով փառաւորուելու համար, եթէ
ո՛չ անձնական հաշիւներ մաքրելու, անտար-
բեր թողուց Մուշեղ վարդապետը որ իր վի-
ճասէր ընաւորութեանը հակասակ՝ արհամար-
հոտ լուծեամբ մը պատասխանեց այս «գայ-
թակողող»ներուն կամայնպէս ձեւացողներուն,
որոնց շարժառիթը շատ լաւ կը ճանչնար։

Գ.Ա.ՄԻՐ

ՊԱՐՏԻՉԱԿԻ Բարձրագոյն վարժարանը
որուն նոր տարելըջանի յայտարարութիւնը
հրատարակած ենք Մասիսի ներկայ թիւով,
յունիսի վերջերը կատարեց իր ամալկերջի հան-
դէսը և 13 ընթարաւարտ ընծայեց այս տարի։
Պոլսոյ այնքան մօտիկ գտնուող կրթական
այդ հաստատութիւնը տարուէ տարի նորա-
նոր բարեօքոմներով կ'օժտուի, առողջ և
գործնական կրթութիւն մը տալով աշակերտ-
ներուն։ Լաւագոյն տարրերէ բաղկացած ու
սուղջական մարմին մը, որուն մէջ կը գըտ-
նուին Տօքթ. Յովսէփ Էֆ. Տէր-Ստեփանեան
և Մինաս Էֆ. Ծալեան, մեծագոյն գրաւա-
կանն է վարժարանին յաջող վիճակին՝ Տօքթ.
Չէմպլըսի տեսչութեան ներքեւ։ 1903—904ի
շրջանը կը խօստանայ աւելի բեղմնաւոր բը-
լալ՝ ուսումնական ու լեզուագիտական տե-
սակէտներով։

ԱՌՁԵ ՍԷՐ



Սին ու ծախու սերերուս մեջ ամեն օր
Ուր ապրեցայ օտարներով անդադրում,
Յոգնութիւն մը, զգուսնմ մը սուր, զօ-
րաւոր

Կը լիկե իմ հոգիս յոգնած ու օրհուս:
Տարփանքներէն. զգուսնմներէն յափա-
ցած

Ձոր ինձ հուլին համբուս վրայ օրն ի բուռ,
Եր զգամ օր ալ մարմինս շատանց ե յոգնած
Ու հոգիս ալ սիւղմերու մեջ քաքաւուն:

Ու լիանքի, յափացումի այս սլահուն
Կը տեսնեմ ես անուշքներու մեջ սնդուս
Քուկին կապոյտ երկինք աչիներդ սիրուն
Ձոր սիրեցի տղայութեան օրերուս:

Ու կը զղջամ քեզի խաբած ըլլալուս
Մոռնալով քու համբոյրներդ մեղրածոր
Ձոր ինձ հուլի մտահոնելով իմ սիրուն
Օրերով զիս երազներով ամեն օր:

Կ'երթամ իսուր զղջումներով առյուծ
Կ'երթամ այսպէս անձրս ձգած հոսանքին,
Աղտոտ հոգիս ջինջ յուսումը միտ օծուն
Քուկին սիրով յիշատակովը անգին...

ԼԵՒՈՆ ՇԱԹՐԱՆ


ԲԵՐԱՅԻ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԸ



Փաստարան խնդիր էՖ. Սիմոնեան որ
քանի մը տարի առաջամակցելով Բերայի Թաղ.
Խորհուրդին, մասնաւորապէս աշխատեցաւ
Հոգաբարձութեան ճիւղին մէջ ու հոգ տա-
րաւ վարժարաններուն, յօգուածներու շարք
մը սկսած է Բիւզանդիոն օրաթերթին մէջ՝
«Մեր վարժարանները» խորագրին տակ: Իր
յօգուածին առաջին մասին մէջ՝ Խ. Սիմոնեան
էՖ. ընդհանուր տեսութիւն մը կ'ընէ թա-
ղային դպրոցներուն տարտամ ընթացքին,
յարափոփոխ կացութեան և վաղնուած դու-
մարներուն համեմատութեամբ ձեռք բերուած
սին արդիւնքներուն վրայ: Կը նկարագրէ

Թաղական—Հոգաբարձութիւն կրկնակ տիպար-
ները, որոնցմէ մէկը՝ առանց փառասիրական
ձգտումի և միմիայն աղոց կրթութեան դործը
իրեն կէտ նպատակի ունենալով՝ կ'աշխատի
ճշմարիտ անձնութեամբ մը, մինչ միւսը՝
ճիշդ հակառակը ներկայացնող. շատ անգամ
հոս՝ ինչպէս դատաւները, առաջինները վը-
հատած տեղի կուտան վերջիններուն խուլ
ընդդիմութեան ու կնդրիկներուն: Եւ վար-
ժարանն է միշտ որ կը տուժէ: Երկրորդ մա-
սին մէջ, յարգելի յօգուածագիրը կ'առաջար-
կէ, իրրեւ ընդհանուր դարձան, կազմել իւ-
րաքանչիւր թաղի մէջ անկողնակալ, խղ-
ճամբիտ և ձեռնհաս անձերէ Յանձնաժողով
մը որ իր թաղին վարժարանին վիճակը քն-
նելով, հարկ եղած բարեփոխումները նկատի
առնելով, սէտքերը ճշդելով՝ իր տեղեկա-
գիրը ներկայացնէ Ուսումն. Խորհուրդին:
Խնդիր էՖ. Սիմոնեան մասնաւորելով խօսքը
Բերայի Էստեան վարժարանին վրայ, որուն
կը նուիրէ իր յօգուածին երրորդ մասը, զի-
տողութեանց շարք մը կը պարզէ՝ իրրեւ
արդիւնք իր մօտէն կատարած ուսումնասի-
րութեանց, և կը խօստանայ յաջորդ և վեր-
ջին յօգուածով մը պարզել վարժարանական
միօրինակ ուղղութեան մը ծրագիրը զոր
պատրաստած էր իր Հոգաբարձութեան օրով՝
Բերայի դպրոցներուն համար մասնաւորապէս:
Խնդիրը զոր մէջտեղ կը դնէ Խնդիր էՖ.
կենսական է ո՛չ միայն Բերայի ծնողքներուն,
այլ նաեւ կրթական դործով հետաքրքրուող
կամ զբաղող ամէն անձի համար, և փափա-
գելի էր որ լուրջ նկատառութեան մը առար-
կայ դառնար՝ փոխանակ «օրուան ընթացքին
չափ հազիւ ազդեցութիւն ունենալու» ինչ-
պէս համապատե՛ն կը գրէ յօգուածագիրը, իր
նախարանին մէջ:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՆՕՐԵՐ



Տիկիներու եղանակալութիւն մը կաղ-
մուցաւ վերջապէս՝ Աղգ. Հիւանդանոցին
համար, և իր առաջին նիստը ըրաւ շարժուս
մէջ, մասնակցութեամբ Տոքթ. Ն. Տաղա-
ւարեանի, այդ Հաստատութեան բժշկապետը

Հոգաբարձութեան կողմէ: Ներկայ անդամուհիներն էին՝ Տիկնայք Զ. Տիկնայք, Յ. Գարամանեան, Ի. Իրրանոսեան, Ա. Մանուկեան, Յ. Մարգարեան և Օր. Մ. Միւհէնտիսեան: Դիւանը կազմուեցաւ հետեւեալ կերպով.—Տիկին Զ. Տիկնայք՝ Ա. ատենապետ, Տիկին Յ. Գարամանեան՝ Բ. ատենապետ, Օր. Մ. Միւհէնտիսեան՝ Ա. ատենադպիր և Տիկին Ա. Մանուկեան՝ Բ. ատենադպիր: Նորընտիր խնամակալութիւնը յօժարութեամբ յանձն առաւ որ իր անդամուհիներէն երկուքը, ամէն շաբթու, կարգաւ Հիւանդանոց այցելեն:

Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսը յունիս 25ին Սիւսէն Ատանա հասեր է՝ ուրկէ Կ. Պոլիս պիտի դայ, թէեւ իր մեկնումին թուականը կարելի չէ ճշգեւ այժմէն: Առաջնորդարանին մէջ, ուր հիւրընկալուած է Ն. Սրբազնութիւնը, կը զբաղի թեմական գործերով, նամակներով եւլին: Կաթողիկոսական վերջին կարգադրութեանց մէջ յիշատակութեան արժանի է Տ. Կարապետ Ծ. Վրդ. ին Կիլիկիոյ բոլոր վարժարաններուն (բաց ի Ատանաէ) վերատեսուէ նշանակուիլը: Նոյնպէս, Սիսի մայրավանքին ելմտապետ ընտրուեր է Թուրսարգիսեան Վրդ. եւ գործակատար՝ Մկրտիչ Վրդ.: Տ. Տ. Սահակ Ս. Կաթողիկոսը սիրալիր ու մեծարալից ընդունելութիւն մը գտած է Ատանայի ազգայիններուն կողմէ:

Իզմիրէն հասած լուրերէ ցաւով կիմանանք թէ առաջնորդ Տ. Մելքիսեդէկ Սրբազանի հիւանդութիւնը հետզհետէ մտահոգութիւն պատճառող վիճակ մը կը ստանայ:

Ս. Պատրիարք Հայրը կիրակի առտու քարոզեց Եէնիգիւղի եկեղեցին, որուն սոնախմբութիւնն էր, և միջօրէէն ետքը այցելութիւն առաւ Վսեմ. Սաղըզ Յովհաննէս էֆ. ի, Տոքթ. Տիգրան պէյ Աճէմեանի և Ալլահվէրտի Յովհաննէս էֆ. ի: Շաբաթ եւ կիրակի գիշեր Ն. Սրբազնութիւնը հիւրընկալուեցաւ Քաղ. Ժողովի ատենապետ Տիգրան էֆ. Եռսուֆեանի բնակարանը:

Պեքպեքեան Վարժարանի աւարտական ճառերու և այլ գրութեանց արտասանութիւնը կատարուեցաւ կիրակի օրը, դպրոցական պարզ հանդէսով մը որուն ներկայ

էին՝ եկեղեցական դասէն՝ Տ. Գրիգորիս Յովհաննէսեան և Տ. Մկրտիչ Վեհապետեան Սրբազանները: Նոյնպէս աշակերտներու ծրնողքներ ու կրթասէր ծանօթ անձինք՝ բարեկամ ու համակրող գրագէտ—դաստիարակին որ այնքան օրինակելի կերպով կը վարէ իր հիմնած կրթական հաստատութիւնը: Հանդէսը բացուեցաւ Կայս. Համիտիէ քայլերգով որուն յոտնկայս ունկնդրեցին ներկաները: Ընթացաւ արտոնքէն՝ հայերէն, թուրքերէն, ֆրանսերէն և անգլիերէն լեզուներով աւարտական ճառեր արտասանեցին Պ. Պ. Ա. Պօղոսեան, Գ. Գրիգորեան, Գ. Շիրինեան, Հ. Ղազարոսեան, Օ. Ռ. Պէրպէրեան, Կ. Բէն. լիվանեան և Ղ. Բաբէրեան: Արտասանութիւններ ևս տեղի ունեցան, որոնցմէ յիշենք՝ Պէրպէրեան էֆ. ի կրտսեր զաւակը, Նուրհան, և Բարթող էֆ. Թէլեանի դեռատի որդին, Կարապետ Թէլեան: Վարժարանին Տնօրէնութիւնը, այս տարի, կազմակերպած էր ջուլթակահար աշակերտներու խումբ մը որ գնահատուեցաւ: Հանդէսը փակեց Տ. Գրիգորիս արքեպիսկ. գրուատնով Պէրպէրեան էֆ. ի արդիւնալից ջանքերը:

ՌՕՍԻԱ Ապահովագրական Ընկերութեան Կ. Պոլսոյ Գործակալութիւնը նոր բարեփոխումներ կրած և ընդարձակած է իր գործառնութիւնները, ինչպէս տեսնուեցաւ այս առթիւ հրատարակուած Շրջաբերականէն և ինչպէս կը տեսնուի նոր յայտարարութենէն որ այսօրուքնէ կ'երեւայ Մասիսի մէջ: Արտաշէս էֆ. Հիւրմիւզ, որ տարիներէ ի վեր քննիչի պաշտօն ունէր, Կ. Պոլսոյ Մասնաճիւղին Տնօրէն կարգուած է և հաստատուած Ղալաթիա, Ազարեան խան, ուր կը գտնուին Ընկերութեան կեդր. գրասենեակները: Ռօսիայի հետ ապահովագրական որ եւ է ճիւղի վերաբերող յարաբերութիւն կամ գործունեցողներուն համար գոհունակութիւն նոր առիթ մըն է Ա. Հիւրմիւզ էֆ. ի նման գործունեայ, պատուաւոր ու ճշգրտապահ անձի մը ներկայութիւնը՝ Կ. Պոլսոյ մասնաճիւղին զբաղմունքը, որ կոչուած է նոր զարկ մը տալու Ընկերութեան գործառնութիւններուն: Իսկ Պ. Ռէրբէն, նախորդ ընդհ. գործակալը, արդի կարգադրութեամբ՝ կը վարէ Ռօսիայի Ղալաթիոյ գործակալութիւնը:

Արսոնաք Կ. Ս. ԻԻԹԻԻՃՍԱՆ

Տպագրութիւն ԱՐԵՆՍԵՐ Օրագրի

ՀԱՐՈՆԱԿԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Մեծ փողոց Բերայի Թիւ 186

ՄԵԾ ԼԻՔԻՏԱՍԻՈՆ

ՀԱՐՈՆԱԿԱՆ ԿԵՐՊԱՍՆԵՐՈՒ ՄԵՏԱՔՍԵՂԷՆ ՈՒ ԲԱՄՊԱԿԵՂԷՆ.

Ք. ՆԱՔԱՄԻՒՐԱ ԵՒ ԸՆԿ. Վաճառատունը պատիւ ունի ծանուցանել արգոյ հասարակութեան եւ իր բազմաթիւ յաճութիւններուն թէ մեծ քանակութեամբ շաքոնական կերպասեղէններ բերել տուած է, վերջին նորաձեւութեանց համաձայն, վայելուչ եւ տոկուն:

Այս կերպասեղէնները ցուցադրուած են շաքոնական վաճառատունը, Մեծ փողոց Բերայի, Թ. 186, ուր այցելողները պիտի գնահատեն անոնց տեսակին ընտրութիւնը ու աղնուութիւնը, միեւնոյն ատեն օգտուելով բացառիկ կերպով զեղչուած գիներէն, իր քիտասիօնի առթիւ:

4—4

ԼԻՔԻՏԱՍԻՈՆԸ ՊԻՏԻ ՏԵՒԷ

Յուլիս 9/22էն մինչեւ 2/15 Օգոստոս 1903

ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

— — —

Դաւթեան Դսբակալութիւնը որոշած ըլլալով նոր զարկ մը տալ հրատարակչական ճիւղին՝ հրաւէր կը կարդայ մեծարոյ հեղինակներուն որպէս զի իրենց գրական երկերը փութան ներկայացնել Դործակալութեան:

Հրատարակելի գիրքերուն ձեռագիրը եւ րեք օրինակ ըլլալու է՝ Մէարիֆի օրէնքով:

Դործակալութիւնը կը ստանձնէ գիրքերու վաւերացման, տպագրութեան, փորձերու սրբագրութեան կազմի, եւ այլ աշխատութիւնները:

Կը կատարէ նաեւ տպագրական ամէն տեսակ գործեր, այցեւորման, շրջաբերական, նամակազուլուի, ազդեր, դպրոցական բարեւիչ, պատուանիչ, վիճակացոյց, վկայագիր, հաշուեգիր, եւ այլն եւ այլն:

Դիմել առ ՍՄԲԱՏ ԴԱԻԹԵԱՆ

Խորասանցեալ խան, Սիրեհնի, Կ. ՊՈԼԻՍ

4—5

ՀԱՃԻ ՍԱՐԻՄ ՕԱՄ.

ՕՍՄԱՆԵԱՆ ՀԱՔԱՐԱԳՈՐԾ ԲԵՐԱՅԻ

Սոյն հանրածանօթ չաքարավաճառը՝ Բերայի շիտակ ճամբան, Թիւ 54, իր խանութը ընդարձակած ու ճոխացուցած է, թէ՛ իբրեւ բաքիսըռի եւ թէ՛ իբրեւ չաքարավաճառ, աւելի գոհ ձգելու համար իր բազմաթիւ յաճախորդները: Ամրան եղանակին մէջ, համեղ պաղպաղակներու պէսպիսութիւն մը կայ ցորեկ եւ գիշեր:

ՀԱՃԻ ՍԱՐԻՄ ՕԱՄ. չաքարագործը ճիշտ մթերք մը ունի հարսանեկան չաքարեղէններու, ընտիր տեսակէ, ու մասնաւորապէս յանձն կ'առնէ հարսանեկան հանդէսներու առթիւ ո'չ միայն անոնց հայթայթումը՝ այլ նաեւ մատուցումը եւ սպասարկութիւնը տուներու մէջ:

Միակ մասնաճիւղ, Ղայաթիա. Թօփճըլար Ճատտէսի, Թ. 101:

4—30

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱՐԴԸ ԵՒ ԻՐ ՅԵՂԸ. հեղ. Բրոն. Ա. Ալպրէխտ, Թարգմ. Մ. Կ. Նաղիկեան ԷՖ. Սեռային առողջարանութեան կարեւորագոյն գիտելիքներուն վրայ խօսող սոյն ժողովրդական գիրքը երկրորդ տպագրութեամբ լոյս տեսաւ Ե. Մատթէոսեան տպարանէն: Դին 5 շրջ: Վաճառման կեդրոնատեղին է Պալեմց գրատուն Կ. Պոլիս:

ԳՐՊԱՆԻ ԲԱՌԱՐԱՆ անգլիէրէնէ հայերէն, որ կը լրացնէ կարեւոր պէտք մը ուսանողներու, ճամբորդներու եւ առեւտրական գործով զբաղողներու համար: Դին 8 շրջ: Կը գտնուի բոլոր գրավաճառներուն քով: Կեդրոնատեղի Սագաեան տպարան, Կալաթա:

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆՍՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՁ 1828-1829

Հ Ր Դ Ե Հ Ի Ճ Ի Ի Ղ

Մինչև 1899ի վերջը հատուցեալ վնասք	240,000,000	Ֆր.
1899ին գանձուած ապահովագրին	19,500,000	»
Դրամագլուխ եւ պահեստ	105,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	18,000,000,000	»

Կ Ե Ն Ս Ց Ճ Ի Ի Ղ

Մինչև 1889ի վերջը հատուցեալ վնասք	99,000,000	Ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	253,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	150,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն»ի ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ՁԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՁ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեալ զինեալ: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի դերադանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոնի ապահովագրողք ՉԵՐՄ են այն վնասներէն եւ յուսախաբութիւններէն, որոնց կ'ենթարկուին միայն այն անձինք, որ շահաբաժիններու բաշխման (accumulation des bénéfices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դուրսեամբ գործող ընկերութեանց Կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամասունքն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԲԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելի ՏՅՈՒՆԴՈՒՔԻՆ

Պոլիս, Սուլթան Համամ, Բասմա Քաթրեր Օղլու

Մասնաձիւղ՝ Դալաթիա, Ինայէթ Սան, դորձակալ Միհրան Էֆ. Դաւիթեան:

Դորձակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ



ՅՈՎԱԼԷՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ

(ՄԵԼՐՈՒՆԻ)

ԱՑԱՄՆԱՐՈՅԺ

Մուգաֆէրիէ Հիւանդանոցին եւ

Պարսկական Վարժարանին

Բերա, Մեծ Փողոց, Թագսիմ, քիւ 61

Զբոսանեան արաւքման

Պալպալեան ամէն օր ահաւայի ամէն տեւալ հիւանդութիւններով տառապողները կ'ընդունի. իսկ Ուրբաթ, Կիրակի եւ Երեքշաբթի մինչեւ ժամը 5: Գիշերուան ո եւ է ժամուան կարելի է դիմել: Պալպալեան կ'երաշխաւորէ իր լեցուցած ու չինած ահաւանները: Յարեկները ահաւայ քաշել տալու համար ուրիշ վարձք մը չկայ. քաշել տուողին կամքէն կախեալ է:

Աղբաւանդուց ճրի

“AU TALON D'OR” Օ ԹԱԼՈՆ ՏՕՐ

ԲԱՐԻՁԵԱՆ ԿՕՇԻԿՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ԳԱՌԼՕ ԱԶՆԱՄԵԱՆ

ՀԱՅ ԿՕՇԿԱԿԱՐ

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ

Կաւել կաղերու համար պատրաստուած

Կալաքա, Վոյվոսա փողոց, քիւ 103

Ճաշակաւոր ու վերջին նորաձեւութեան համաձայն կոշիկներու յանձնարարութեան համար, — մանաւանդ չափու վրայ չինուելիք, — կ'արժէ անդամ մը այցելել սոյն վաճառատունը:

Կ. Յ. ՏԵԻՐՄԵՆՃԵԱՆ

ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐ

ՍԱՄՍՈՆ

Կը ստանանէ վաճառականական պիտոյից, սպազրական գործերու պատրաստութեան հոգը.

Գին ԴԻԻՐԱՄԱՏՁԵԼԻ

Մաքուր եւ արագ գործօնեութիւն.

Արժէք կանխիկ. 5% զեղչ.

Մանօթ վաճառականաց, ապառիկ.

Առաջին փորձը կը վստահեցնէ ձեզ ամէն

մասամբ:

Մանրամասնութեանց համար դիմել

Կ. Յ. ՏԵԻՐՄԵՆՃԵԱՆ

ՍԱՄՍՈՆ

ՖԵՆԻՔՍ ԷՍԲԱՆԵՕԼ

ԱՊՍՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.

Հրդեհի եւ Կեանքի Ի ԲԱՐԻՁ


Դրամազուլու՝ 63,228,000 ֆրանք: Դրամա-

տուն Ի Կ. Պոլիս՝ Դրեաթի Լիօնէ

Դեր-Գործակալ Կ. Պոլսոյ Նիւլիքն

ՔԱՌԼՕ ԱՀՆԱՄԵԱՆ

Կալաթա, Վոյվոսա փողոց Թիւ 103



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենայ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղաւկի աղբիւր մըն է: Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

ՍԻՆԿԷՐ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱՂԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

Սինկէրի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ ամէն ոք Սինկէրի մեքենաները կը գնէ:

ՀԱՐԱՐԱԿԱՆ
ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄԵՆԵՐ

ԲԱՐՍ.

1. Մեծ փողոց, Պօն Մառչի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին:
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

ԿԱՆԱԹԱ.

1. Սինկէր խան, Թիւնկլին ետեւը.
2. Գարաքէջ, Թրամվէյին կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ

1. Սուլթան Համամ, Թ.
2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13.

ՍԿԻՏԱՐ

Չարչը Պոյու, Թ. 120.

Դասերը եւ նորոգութիւնք ձեռք.

Կասաբեալ երաւիսաւորութիւն:

Մասնանիւղեր գաւառաց բոլոր հաղաճեւորմ մէջ:

Սինկէրի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւզօղլուի տունը:

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ

ԿԱՅՍ . ԹԱԳ . ԱՌԱՆՁՆԱԾՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ . ԸՆԿ .

Հրդեհի եւ կեանքի (Ի ՎԻԵՆՆԱ)

ՊԱՏՈՒՍԱԿԱԼ ՆԱԽԱԳԻՏ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ. ԳՈՒԹՍ ԼՈՒՐ ՏԷ ՊԱՎԻԷՌ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր . ԸՆԿ . Ընդդեմ հրդեհի (Ի ՔԱՐԹԱՅԷՆ)

ԱԼԼԵԱՆՑԱ

Ծովային ապահովագր . ԸՆԿ . (Ի ՆԵՆՈՎԱ)

Սոյն ընկերութեանց Դրամատունն է Ի Կ. Պոլիս , Քուէքի Լիօնի
Ընդհ . եւ լիազօր ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ. ՅԵՐԱՏԵԱՆ

Գրասենեակ , Պոլիս , Հանօբուլօ խան , Թ . 52-53-54-55-56

ՏՈՔԹՈՐ Լ. ՄԱԼԽԱՍԵԱՆ

ՎԻՐԱՐՈՅԺ-ՄԱՆԿԱՐԱՐՁ

Մասնագէտ կանանց հիւանդութեանց
(Վկայեալ Բաշիզէն)

Կը դարմանէ ներքին ու արտաքին հիւանդութիւններ , կը կատարէ վիրաբուժական գործողութիւններ՝ վերջին կատարեալ գործեալ դրութիւններով :

Բարիդի , Նանսիի հիւանդանոցներուն մէջ երկար տարիներ օգնական-բժիշկի (էքսքերն) պաշտօնը վարած ըլլալով , գործնական ու փորձառական երկար ուսումնասիրութիւններ ընելէ վերջ , այս անգամ Կ. Պոլիս եկած եւ հաստատուած է Բերա , Թարլա Պաշը , Թիւ 136 :

Ծանօթ .— Հիւանդներ կ'ընդունի ամէն օր կէս օրէն վերջը իր բնակարանին մէջ , ժամը 1-4 (Ը . Ե .) : Երեքշաբթի օրերը միեւնոյն ժամուն ձրիաբար կը դարմանէ կարօտ հիւանդները :

ԴԱՇՆԱԿԻ ԴԱՍ

Դաշնակահար օրիորդ մը , որ խիստ լաւ մէթոտ մը ունի նորաւարժները մարզելու դաշնակահարութեան , կը փափագի այցելութեամբ դաս տալ տուններու մէջ : Դիմել՝ Մասիսի խմբագրութեան :

HOTEL «FERAH»

ՕԹԷԼ «ՖԵՐԱՀ»

Բրինքիբօ , Նիդամի պողոտային վրայ , ծովահայեաց , ընդարձակ պարտէզներու մէջ : Վարձակալը , Առաքել Տերեկեան որ այնքան խնամօք կը վարէ Պոլիս Սուլթան Համամի հանրաժանօթ նախկին Գասպար ճաշարանը , յանձն առած է նիւթական ամէն զոհողութիւններ ընել՝ իր բաղմամբ յաճախորդներուն հանգստութեանը համար :

Գիները չափաւոր . լաւ եւ մաքուր սնունդ . պանդոկը բաց է Եւրոպական մայիս մէկէն սկսեալ :

ՏՈՔԹ. Ե. ՄԱՍԻՍ (Բերա , Թագսիմ փողոց , ք . 15) Բացի սովորական ներքին հիւանդութիւններէ , կը դարմանէ մասնաւորաբար , նոր մեթոտներով եւ խնամով , ստամոքսի , աղեաց , միզային ճամբաներու հիւանդութիւնները , ջղային տկարութիւնները , դաղձիական արտաբերը (սիֆիլիս եւ այլն) եւ մորթի հիւանդութիւնները : Հիւանդ կ'ընդունի ամէն օր կէս օրէ վերջը :